



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



17569-

17573

370.1

P-34





2001

2001

# Գ Ե Ղ Տ Ն Ի Ք

## Դ Լ ՈՒ Խ Ը

Երեք բարեկամներ

Երեք պատանի. Շարլը Տարս, Ռոստոլֆ տը Լաննուա, և Ելֆրէտ Սերվէ, իրենց մանր տղայութեան ատենէն մանրիմ բարեկամ էին իրարու. ասոնց ծնողքն ալ իրարու դրացի և բարեկամ էին. ամէն առէն իրար կը տեսնէին և կը սիրէին. սէրերնին սրտանց և անկեղծ և եռանդոտ էր. և իրենց բնական ըսողաքին պարծանքն եղած էին: Քաղաքացիք ասոնք օրինակ կը բրոնէին և մատով կը ցուցընէին իրարու: Ամէն ատեն մէկ տեղ. ամենեւին

անձնասիրութիւն եւ փառասիրութիւն  
 չունէին . իրարմէ բաժնուելիք չունէին .  
 դիտես թէ մէկին հոգին իր երկու ըն-  
 կերներուն ալ մէջը կը բնակէր : Հազ-  
 ուազիւտ օրինակ մըն էր այս . որուն  
 քով հին ժամանակներէն պատմուած  
 բարեկամութեան զարմանալի օրինակ-  
 ները բան մը ըսել չէին :

Ընկերութեան մէջ վիճակներն հա-  
 ւասար ըլլալնին ալ ասոնց սէրը չէր  
 կրնար արել : Արլը հարս որք էր,  
 բայց հարուստ . ու կեանքը հեշ-  
 տութեամբ եւ զուարճութեամբ կան-  
 ջընէր : Որտալ՞ վաճառական ըլլալու  
 սահմանուած էր, եւ նաեւ որ տէր հա-  
 րուստ մարդու մը գործքերուն մէջ պի-  
 տի մըտնէր : Այս ալ զբոսանքը . շատ  
 կը սիրէր, եւ Արլը մէկ տեղ մը եր-  
 թալու կամ մէկ զուարճութեան մը պա-  
 րապելու ըլլարնէ անկէց չէր զատուեր :

Մ. Պ. Քրէտ Սերովէ՝ իրաւագիտութեան  
 Զամբան բրնձած էր. եւ ուսման սէր  
 ունենալովը շատ անգամ իր երկու ըն-  
 կերներուն զբօսանքէն ետ կրմնար :  
 Վկարագրութեան մէկ կողմէն նկատու-  
 լով Մ. Պ. Քրէտ այս ընկերութեան մէջ իր  
 տարիքէն աւելի խելացին էր. Շարքը՝  
 բարեբարութեան միտում ունէր : Իսկ  
 Սրօտօլֆ անկեղծ եւ զուարթ էր, ու-  
 բիշներուն սիրաւը դիւրաւ իրեն կը քա-  
 շէր : Արեքին ալ շարժմունքը եւ բնա-  
 ւորութիւններն տարզեր էին. գուցէ ի-  
 բար սիրելնուն ալ պատճառը այս էր որ  
 մէկուն շունեցած աղէկութիւնը միւսը  
 ունէր, եւ իրարու պակասը կը լեցընէ-  
 ին :

Մ. Ս. Երեքին բարեկամութիւնը շատ  
 ժամանակ էր որ կը տեսէր : Իրենք շատ  
 տարուք չէին ալ նէ՝ սէրերնին հին էր.  
 Խորունկ հիմ ձգած էր անցած ժամառ

նակի մտերմութիւններով: Ամէն յիշա-  
 զուածիւննին հաւատար էր. տղայու-  
 թեան ատեննին մէկ տեղ խաղացեր  
 էին. մէկ տեղ կարգացեր էին. մէկ տեղ  
 վշտացեր էին. դպրատան մը պատիւը  
 մէկ տեղ աւեր էին. զբօսանքի մէկ տեղ.  
 պըտըտելու, կարգալու, ընկերու-  
 թեան, շարունակ կամ քիչ ատեն տե-  
 ւող աշխատութեան, ուրախարար վա-  
 յելքի, ասանկ բաներ ամէն ալ մէջեր-  
 նին հասարակաց էր: Կրթութեան հետ խո-  
 սած ատեննին մէկ բան մը յիշելով ու-  
 րիչ հազար բան ալ մտքերնին կուգար.  
 մէկին ձայնը երկու արձագանք կունե-  
 նար:

Այս ընկերութեանը՝ որ ասանկ սի-  
 բուն եւ եռանդուն կերեւէր, եւ գրտէն  
 այսքան իրար կապուած կը տեսնուէին.  
 բան մը պակաս էր. այս բանս էր հա-  
 շարքը. շունեցածնին էր. Աստուած:

Ուէ՛ մի որ Մատուածանման-Քեան գիրքը՝ կըսէ . “ սերդ Մատուածոյ վրայ ”  
 “ պիտի հաստատես . երբ որ բարեկա-  
 “ մութեան կայքը անիկայ չէ՛ նե՛ մաքուք  
 “ եւ գիտացկուն չըլլար ” :

Աստի այս երեք պատանիներուն սիրոյն մէջ՝ աշխարհային բաներուն անցաւոր սերմը կար . վասն զի ժամանակի տղայ ըլլալով նորերու կ'ըթու թիւնով վարժուած էին . Մատուած մաքերնին չէին բերեր . Զանոր չէին ապաւիներ . ո՛չ մտածմունքնին եւ ո՛չ սրտերնին գէպ'ի Մատուած չէին քարձրանար . եւ աշխարհային բարեկամութիւնները չժամկտայրնող եւ չորդնոտայրնող խունկը երկինքէն խնդրելու հոգ չէին ըներ . որպէս զի ժամանակը եւ կիրքը եւ շահախնդրութիւնը անիկայ չքակէ :

1 Ինչպէս Գեորգիին մէկ գեղքն է . որ ամեն լեզու թարգմանուած է :

Արկար՝ ասեն մէկ տեղ կենալէն  
եւորը երեք բարեկամները քանի մի օր  
կար օր բաժնուած էին . եւ ասիկայ  
բաժնուելուն առաջին 3 անգամն էր .  
Ալֆրէտ իրեն աղգական մէկ խաթու-  
նի մը հրաւերին չէ՛ շկրնալ ըսելով  
գեղ գացեր էր անոր քովը . Շարլը եւ  
Սոսօլֆ մինակ մնացեր էին . եւ իրար-  
մէ չէին զատուեր . սովորաբար իրիկուն-  
ները մէկ նարճարան մը երթալով ճար-  
տարակ (սատրանջ) կը խաղային . ուր  
Պաղամեղեսին՝ հնարած այս խաղը եր-  
բեմն մինչեւ զիշեր ասունք կը ըլնէր .  
եւ ամէն ատեն ալ աղէկ չէր վերջանար .  
Այսան զի երկուքն ալ ճարտարակի ա-  
բանոս եւ փղոսկրեայ զօրքերուն խա-  
ղաղիկ շարժումները կը սիրէին . եւ այս  
գժուար խաղուն մէջ ճարտար գանուիլը  
իրենց պարծանք կուգար :



## ԳԼՈՒԽ Ի.:

Կաթ.

Օգոստոս ամսոյն մէջ մրրկալից  
իրիկուն մըն էր: Տաք հովմը հարաւ  
կողմէն, գուցէ Աղլաս լեռներուն վը-  
րայէն անցնելով գիտես թէ հրաբորբոք  
շունչ մը կը բերէր վրանին. որ ուղեղն  
ու ջիղերը կը մնասէին: Հովին աղ-  
գեցութեանը տակն ինկած մարդիկ  
ջերմ բընածի պէս կը դողային եւ  
ծանր թուլութիւն մը վրանին կուգար:  
Ռոտոլֆ եւ Շարլը քիչ մը զովանալ  
կուզէին. իրիկունները գացած սրճա-  
տուններուն դուրսը պարտիզակը նստած

էին. Ժարարակին տախտակը առաջնին  
էր, բայց տակաւին շինն իսպառ. այն  
ասկները պատահելով ամենուն խօսքի  
նիւթ եղած քաղաքական դէպքի մը վրայ  
կը խօսէին: Այս կամ այն մտքալից օղը,  
կամ խօսակցութիւն ըրած բաներնին  
այս երկուքիս մէջ իրարու դէմ հակա-  
ռակութիւն մը եւ հպարտութիւն մը խօ-  
թած էր: Հոն գըրանուօղները դիւրա-  
խմացան՝ որ անոնց մէջ սովորաբար տես-  
նուած սէր եւ միաբանութիւնը այս ան-  
գամ չըտեսնուիր: Վիշ մը խօսելէն  
ետքը Շարլը մէկէն ըսաւ. խօսքեր-  
նիս կըտրենք ու խաղանք:

— Ուստի կամացուկ մը մէկ հե-  
տեակ մը (բիշատէ) առաջ քշեց: Վար  
մըն ալ Շարլը քշեց: մտադրութեամբ  
խաղերնին շարունակեցին: բայց երկու  
կողմէն քանի մը քար քշելէն ետքը Ու-  
ստի իր խաղակցին մէկ անգգ ուշուքիւ-

նը իր օգտին գարններով խաղը վաստակեցաւ :

Շարքը շարմացաւ . միանգամայն եւ սիրաւը նեղացաւ . քարերը նետեց եւ ըսաւ . իմ ուշադրութիւն չընելովս խաղը վաստակեցար . ասիկայ քաջութիւնն չէ :

— Այս քեզի ըսի որ թագուհիդ ( շահը ) վասնդի մէջ է . դուն չգիտցողի մը պէս խաղացիր , ինչպէս որ ամէն ասուն կընես :

— Վա յաղթելդ ալ օրինաւոր կերպով չէր . ահա քու վարպետութիւնդ ալ այս է :

— Ի՞նչ ըսել կուզես Շարք :

— Բամ չէ . ըսածքս՝ գիտեմ :

— Միտքդ հասկըցո՛ւր :

— Չէ՛ ըսի քեզի :

— Ատքը ասոր հաշիւը ինձի պի-

տի տաս :

— Երբ որ ուզես :

Երիտասարդ բարեկամները այս  
խօսքերը բարձրկէկ խօսելով՝ շատ  
մարդիկ լռսեցին : Երկուքն ալ այս կը-  
ռխովս տաքցած՝ բարկութիւնը դէմ-  
քերնուն վրայ կերուէր . եւ մանաւանդ  
Սոսօլֆ իր սրտին նեղութիւնը հա-  
զիւ կըրնար զսպել . իր խաղակցին փո-  
խարէն լան մը շառաղարկած խաղուն  
տախտակին գլխէն ելաւ . մտիս քա-  
շողներուն եւ խմտուք խմողներուն  
բազմութեանը խառնուեցաւ . ամէնքն  
ալ դիտեցին որ երեսը գեղնած՝ : եւ  
սիրտն անհանգիստ էր : Շարը անհոգ  
դէմքով որպէս թէ հակառակօրոյն ար-  
համարհելով գլանիկը ( սիկարը ) բե-  
րանը նստած էր : Երբ ծխելը լըմնցուց՝  
նստած տեղէն ելաւ . եւ ծանր քալ-  
ուածքով մը սրճարանէն ելաւ գնաց :  
Սոսօլֆ ասոր ելելը տեսնելուն պէս

ինքն ալ ելաւ, եւ տեսնողները ըսին .  
 սալմանք կռիւք պիտի գեշցընեն :

Դամանակը բաւական անցած էր .  
 փողոցը մարդ չկար . երկինքը տակա-  
 ւին փոթորիկին ձայնը հետուէն կը լըս-  
 օւէր . լայն ու դժգոյն փայլակները հո-  
 րիզոնը կը ձեռքէին . տաք անձրեւի մը  
 առաջին կաթիլները գետինը իյնալ եւ  
 այսգիս այնգին թըրջել սկսած էին .  
 Վիշմը ետքը մէկ սաստիկ փոթորիկ  
 մըն է փրօթաւ քաղաքին վրայ . եւ դի-  
 շերը մինչեւ լոյս որոտումը եւ կայծա-  
 կը եւ անձրեւը եւ կարկուտը չկտրե-  
 ցաւ . անձրեւը հեղեղի պէս կուգար .  
 եւ քաղաքին փողոցները լուալն ետքը  
 կերթար գետին ջուրը կը բարձրացընէր :

Կեղացիները այն օրը առուտուրի  
 համար քաղաքն եկած ըլլալով՝ առ-  
 ւուսնց կանուխ մէկ նեղ փողոցէ մը  
 անցած առեննին կանկ կառնէին նեղ-

ուշին ( եայա եօլու ) քարերուն վը-  
րայ անշարժ փրուած ինկած մարդու  
մը առաջ : Մարդուն դէմքը գեանի  
վրայ դարձած էր . թեւին մէկը սաստ-  
կութեամբ դէպ 'ի առաջը երկընցու-  
ցած եւ ձեռքին մասները ամփոփած եւ  
քաշուած : Մէկը շհամարձակեցա-  
պս քնացած կամ մարած կամ մեռած  
մարդուս դպշել , մինչեւ որ ստիկա-  
նութեան գործակալը եկաւ : Մտիկայ  
հրաման ըրաւ . մարդը կոնակի վրայ  
դարձուցին . կատարեալապէս պաղած  
մտացած էր . եւ մեռնելէն 'ի վեր շատ  
ժամեր անցնելը յայտնի կերեւեր :  
Մահուանը պատճառը երկբայութեան  
տակ 'չէր կրնար խշալ . ճակատին վրայ  
եւ գլխոյն առաջի կողմը՝ ծանր բան  
մը՝ զարնուելէ պատճառած : ահաւոր  
վերք կար . եւ մազերն ու հազուսաբ  
արիւնշուայ եղեր էին :

Ոստիկանութեան գործակալը ասիկայ անանկուն պէս գորովելով ըսաւ . Տէր Էարլը Տարսն է ասիկայ . խնդն երիտասարդ , թշնամի շուներ . նրդեօք ո՞վ է զարկեր :

Կազմութեան մէջէն մէկը ըսաւ . գողի բան ըլլալու է :

Կործակալը պատասխանեց . չըկրճնար ըլլալ . ժամացոյցը , սակի շքիւթայն . ( քօրտօնը ) . քսակը եւ գրասանակը ( ճուղտանը ) հոս են . Սեանելը յանկարծ պիտի ըլլայ . մէկէն վերան հասած զարկած մեցուցած ըլ-

ճալու են :

Սիւնիս միջոցին ոստիկաններուն մէկը փողոցին քովի ջրի ճամբուն մէջ լնկած գաւազան ( պաստօն ) մը գտաւ . որուն գլուխը գեղեցիկ , բանուած . բայց կապարով ծանրացած էր բերու եւ կործակալին ցուցանելով գուցէ

սպանման գործիքը սա՛ եղած ըլ-  
լայ ըսաւ :

Գործակալը գաւազանն առնելով  
ըսաւ . ասիկայ մեծնողինն է . վրան ալ  
անունը գրուած է . բայց նայէ՛ , անոր  
մազերուն գունովը թխագոյն մազեր  
պլլլուած են գաւազանին լոնելու տե-  
ղին քանդակներուն մէջ . ուստի իք  
գաւազանը իր մահուանը գործիք ե-  
ղած էր :

Ս' արդ ձան շէր հաներ . այս խեղճ  
տեսարանիս առաջը արցունք թափող  
ալ կար . անոր գեղեցիկ եւ արիական  
դէմքին , տեսքը ամէն սիրտ 'ի գուժ  
կը շարժէր . որուն վրայ տակաւին յան-  
կարծակիի գալով շուարածի , վախցածի  
եւ ցաւ կրածի նշաններ կերեւէին .  
այս չհասկըցուելու եղեանադորձու-  
թեանս վրայ կարծիք շէր քնար կը  
զըրուցէին : Ս' ետելք պատգարակի մը



զրայ գրին. և մէկ անթիւ բաղմու-  
թիւն մը՝ որ քանի կերթար կաւելնար,  
լուծեամբ և տրտում գէմքով պատ-  
գարակին ետեւէն կերթային մինչև իր  
բնակարանը՝ որկէց նախընթաց առ-  
տուն ողջ առողջ՝ և գլխուն գայիքը  
մտքէն ալ շանցնելով, և ևս շտաած էլով  
որ դաւածանութիւնը և մահը իրեն  
թեթեւ ընթացքով անցած փողոցին  
գլուխը կը սպասեն, դուրս ելած էր.  
և հիմայ մեւելը անկէց ներս կը մտնէր:

## ԳՆՈՒԽ Գ.

Քառասանամյան հարցփոթ

Արդարութիւնը շուտ մը իր հետեւողութիւններն ընելու սկսեց : Ասիւք Տարսին որպիսութեանը վրայ քննութիւններ ըրաւ : Աշխարհային էր . գուցէ քիչ մըն ալ թեթեւ . բայց կանանաւոր : Աստիճանի մարդոց հետ յարաբերութիւն մը ունենալը գիտցող չկար . թշնամի շունէր . քնութիւնը հետեւ մարդոց հետ վարուող էր . քրտակն ու ժամանակը ուրիշներուն ծառայելու նուիրած էր . բոլոր կենացը մէջ մնաւ թշնամութիւն մը ունեցած

չէր մեկու մը հետ : Կէկէ մը վշտացած ըլլալուն գանդտած շէ'ր . ուրիշն ալ վշտացուցած շունէր . ամէն մարդ սրտին աղէկութիւնը եւ առատաձեռն ողորմածութիւնը գովելով շէր կշտանար : Աւտախ մեռցընողին ձեռքը գէնք աըտողը ո՛չ քէն մը կրնար ըլլալ եւ ո՛չ վրէժխնդրութիւն մը . եւ սպանութեան պատճառը ուրիշ երեսէն բընտրուելու էր : Շարլը հարսը իր կենաց վերջին ժամերը տեսնողներուն ամէնուն ալ հարցուցին . եւ այս ժամանակը սրճարանին մեջը անցուցած էր : Ահայները պատմեցին որ իրեն Առտուլի աը Կաննուա բարեկամին հետ սրճարանը մտեր էր . իրարու հետ խօսակցութեան մը բանուեր էին . եւ խօսակցութիւննին՝ որ ուրիշ ատեն սովորաբար հանդարտ կըլլար , այն իրիկունը կռիւ կը նմանէր : Ասոր մըն ալ

Ճարտարակ խաղացին. խաղը Ռուսոյ՞ֆ  
վաստը կեցաւ . անոր վրայ իրարու կը-  
ծու շնորհ խօսքեր ըսին եւ իրարմէ  
զատուեցան . բայց երկուքն ալ սրձա-  
րանը մնացին : Ա՞ննն ալ նկատեր էին  
որ Ռուսոյ՞ֆ տխուր եւ նեղասրտած էր .  
Արլը անոր մնաս բարեւ չըսած գը-  
նաց . այն երթալուն պէս Ռուսոյ՞ֆ ալ  
արտօրնօք ետեւէն գնաց : Արլը  
Տարսին բնակած տանը տէր խաթու-  
նը վկայեց , որ կէս գիշերէն ետքը  
ժամը շէկ ու կէսին՝ երբ ինքը պառ-  
կած էր , անոր ներս մտնելը իմացաւ .  
որ մինակ չէր , վասն զի համարձակ  
լըսուելու շափ բարձրկէկ ձայնով իրեն  
հետ եկողին ըսաւ . հրամէ՛ վեր ելի՛ր  
սիրելիս : Վիշ մը ետքը Տարսին սեն-  
եակէն երկուքին ձայնին բարձրանալը  
լսեց , որ կոխ ընելու պէս էր : Արկ-  
րորդ ձայնը ինքը չէր կըրցած ձանչ-

նալ : Հինգ րոպէ ետքը երկուքին մէկը, ո՛րն ըլլալը շէր գիտէր կինը, արնէն դուրս ելաւ . րոպէ մը ետքը դուռը նորէն բացուեցաւ ու գոցուեցաւ . եւ իրեն անանկ եկաւ որ Տարս իրեն քովէն նոր զատուող բարեկամին ետեւէն կը վազէ : Անկէց ետքը Շարլը Տարսին ինչ ըլլալը գիտցող շկարայտու ամենայնիւ՝ մեռելին փառնալուն եւ կարծրանալուն նայելով կը ընար պուշակուիլ որ արնէն դուրս ելլելէն անմիջապէս ետքը մեռած է . եւ մուցընուցնալ՝ հետը ներս եկող ընկերն ըլլալու է, որուն հետ կախ ըրեր են . եւ հաւանական է որ կռիւք արին՝ հեղուժեամբ լըմընցուցեր են :

Եայց ո՞վ էր այդ արինստերը :

Առաջին փաստատանարանը, կանչուեցաւ : Արեւսին վտայ նկարուած էր արտին աղէկաւոր ցաւը . պատասխան-

ները իրար ջբռնելէն կիտացուէր թէ  
դժնգակ տազնապի մէջ է հոգին : Ի-  
րիկուան ժամանակը ինչպէս անցրնելը  
հարցուցին . վիայներուն պատմած ինչաբ  
եւ նմանը ըսաւ . լալով խոստովանե-  
ցաւ ալ որ այս առաջին անգամ իր կե-  
նացը մէջ՝ Շարլը Տարսին հետ կախ-  
ընելով սիրտը վշտացուցեր էր : Իրի-  
կունը մինակ մենք երկուքս էինք ըսաւ :  
ուրիշ ժամանակ Ալֆրէտ Սերվէ՛ որ  
նայն իսկ խոհեմութիւնն է , մեր մէջը  
միաբանութիւն կը պահէր . թող շէր  
տար որ իրարու գպշիլու խօսք ըսնք :

— Դուն Շարլը Տարսին՝ ասոր հա-  
շիւք հոքը կը տեսնենք ըսելով սպա-  
նացեր ես :

— Սպանալիք շէր այդ խօսքը .  
կատակ մըն էր : Ինծի գպշող խօսքէ  
մը վշտանալ՝ կարելի էր ինծի . բայց  
Շարլէն վրէժ խնդրել . ո՛չ երբէք :

— Բայց խօսքիդ տակը սպառնայիք  
կար. անկէց ետքը Տարսին հեա մկ  
մըն ալ շեօ խօսիր այն իրիկունը:

— Ընիկայ անարգելու խաւունք չու-  
նէի. ափսո՛ս. հիմայ աղէկ կիմանամ:  
Ինեղձ Շարլըս պիտի շկրնայ ըսել աս-  
կէց ետքը, թէ քեզի կընծերեմ:

— Ընանկ է նէ ներում առնելու  
պէտք ունենալդ կը ճանչնաս, ըսաւ  
դատարորը կասկած ընելու կերպով:

— Ընչուչա. բարեկամութեան մէջ  
ամենաթեթեւ կերպով մըն ալ ընկերը  
վշտացընելը ծանր մեղք չէ՞ մի, երբ  
մահը վրայ գալով ամէն ճար ու ճարակ  
կը հեատցընէ:

— Ինչն այդ սրտի փափկութենէն  
զատ ուրիշ յանցանք ալ կըրնաս ունե-  
ցած ըլլալ. բայց այն իրիկուան բրած-  
ներուդ պատմութեանը գանք: Շարլը  
Տարս\_սրճարանէն ելածին պէս զու ալ

Եսեւէն ելա՞ր :

— Այո՛ :

— Ի՞նչ էր միտքդ :

— Ս՛եր խենթօրէն կոխէն ետքը  
Տետը հաշտուիլ . եւ պատկելէն առաջ  
մէկ մը հետը պագտուիլ :

— Ասիկայ քու վրայ երեւցած  
բարկութեան նշաններուն հակառակն է .  
Առըստ Տարսին վրայ տեսնուած բա-  
ցատրութիւններն ալ այդ շնն արդա-  
րացընէր :

— Ի՞նչ ճշմարիտը այս է :

— Առըստ Տարսին պատահեցա՞ր :

— Չէ՛ :

— Ո՞ր ճամբէն գացիր :

— Տարսին տունն երթուելու ճամ-  
բէն :

— Եւ անոր չպատահեցա՞ր :

— Չէ՛ . պատուոյս վրայ ասանկ  
կը վկայեմ :



— Վառ տունդ գացիր :

— Չէ :

— Ինչո՞ւ չգացիր :

— Ատրիշի է որ օդոյն աղղեցու-  
թենէն ըլլայ, սաստիկ յուզումքի մէջ  
ըլլալովս ինձի աւելի աղէկ եկաւ որ  
քիչ մը իրիկուան զով ողջ վայելեմ.  
եւ շատկէկ պըտըտելով անգամքներս  
կակուղորնեմ :

— Եւ դ պըտըտելիդ արդարութեան  
տուաջ քիչ մը կասկածելի կերեւի.  
քեզնէ ինչո՞ւ պահեմ. հուն մտած տ-  
անդ լաթերդ թաց ու ցեխոտ են ե-  
ղեր :

— Վաղարէն դուքս ելած էի. փո-  
թորիկին տանը թրջեցայ :

— Եւ ասիկիդ վրայ ալ արխանի բիծ  
կայ եղեր :

— Պշտտ մտշտաներու տակ ես զիս  
պատասպարելու համար մտած տաննս

փուշերը ձեռքս սրկըգցցին :

— Այդ փշոտ մացառները ո՞ւր են :

— Այնքին ջազացքին քով Ս. Ա. տեղին ճամբան :

— Գոթորկալից գիշեր . մինչեւ հոն գացե՞ր ես :

— Վսչել կուզէի . ասով պիտի ըզրօսնուի . փոթորիկը աչքիս շեր երևւեր :

— Չըլլայ որ յանցանք մը գործած ըլլատ , եւ ներսդ յուզող տաղնայէն ազատելու տեղ բընտրուած ըլլաս :

— Հանցա՞նք գործ ել . . . Ա՛ս . . . Արնա՞ս ինձի համար այգպէս կասկած մը ընել :

— Այս անանկ կասկած մըն է որ ամէն կողմէն հաստատութիւն գտնելու վրայ է . ամբաստանութեան տակ ես . եւ բանտ պիտի երթաս :

Այս ահա որ խօսքը երբ Ռօսօլժ լըսեց՝ երեսին գոյնը նետեց . ծունկե-

բը դողալ սկսան. մարեցաւ: Արքային  
քը գլուխն եկաւ եւ գլխուն եկածը ի-  
մանալաւ աստիճանը մտաւ՝ զինքը մի-  
նակ գտաւ մէկ քարուկիւր կամարայարկ  
սենեկի մը մէջ. ուր կար երկաթէ ան-  
կողին մը, սեղան մը, եւ աթուակ  
(տանտալեա) մը: Մէկ հատիկ պա-  
տուհան մը ունէր լոյս անելու. սեն-  
եակին վերնակամարին մտաւ. այն ալ եր-  
կաթ վանդակով պատած: Գուռը ա-  
մուր կըղպած էր. վրան մէկ պըղտիկ  
դըմնակ մը ունէր երկաթ վանդակով  
գոցուած. անկէջ դուրս նայելով տե-  
սաւ որ բանտապահ զինուորը դըրսիսը-  
բահը կանոնաւոր քալուածքով կը պը-  
տըտէր: Արկիւայելու տեղ շինեաց. կե-  
ցած տեղը բանտ էր. եւ գաղանի  
բանտ, եւ ամբաստանութիւնն էր. որ-  
պէս թէ իրեն ամենալաւ սիրելի բա-  
րեկամը մնացընողն ինք եղած ըլլայ:

Կէս օրէն ետքը երկրորդ հարց-  
փորձ մը եղաւ. եւ իրիկուան դէմ ամ-  
բաստանեալը մեռելին մարմնոյն քո-  
վը տարին: ԻրօտօյՖ երբ այն սննեա-  
կին մը գտնուեցաւ՝ որ իրեն աղէկ  
ծանօթ էր, եւ քաղցրիկ ժամանակներ  
անցուցած էր չհոն. երբ բարեկամը  
գոյրը նետած, անշարժ, պաղած, մահ-  
ուան անկողինին վրայ տեսաւ, այն  
իրեն տղայ տարիքէն ՚ի վեր ընկերը,  
մանկութեանը եւ պատանեկութեանը  
գորովագութ բարեկամը, երբ բերա-  
նը տեսաւ որ ա՛լ անկէջ ետքը խօսե-  
լիք չունէր. աչքերը գոց. դէմքին գը-  
ծագրութիւնը ո՛չ կենդանութեամբ  
հոգևորուած եւ ո՛չ մահուամբ հանգ-  
չած, այլ ցաւու մէկ վեհ արտայայ-  
տութիւն մը վրան տպաւորուած. ճա-  
կասը ճեղքած. գազաթին ոսկորը  
կտարած բացուած. վերքը՝ որկէջ

խեղձին հոգին թսեր գացեր էր : Երբ  
 մարդկային ահարկու եւ անողոքելի  
 արդարութիւնը այս տխուր գիակին  
 առաջը մերաւ կանգնեցուց Սոսուֆը .  
 բան մը չկրցաւ պատասխանել . ան-  
 շընչացեալ բարեկամին առաջը ինկաւ .  
 սաքերը գրկեց . եւ հեծեծելով կը ց-  
 կըտար ձայնով որ ջըզ' րուն ցընչուե-  
 լէն կուգար , ըսաւ . վա՛խ Շարլը ,  
 սիրելի՛ իմ . արթընցի՛ր . ըսէ՛ որ քեզ  
 կը սիրեմ . ըսէ՛ որ քեզի կը ներեմ . Մեր  
 այն թշուառ կտրւը չըլարնէ ասունց  
 մէկն ալ չէր ըլլար . ո՛հ . գուն կապ-  
 րէիր . ըսէ՛ թէ քեզի կը ներեմ . որ ես  
 ալ խաղաղ մեռնիմ : Շարլը , Շարլը :

Ըսկէց աւելի բան մը չկրցան  
 սովորիլ . եւ գրէ՛ թէ կիսամահ , առին  
 նորէն բանաը տարին :

Շարլը Տարսին թաղման օրը բա-  
 ւոր քաղաքը սուրի մէջ էր : Մասնա-

շուժեանք վրայ կողքային: զի բընտե-  
 լութիւնը եւ բարի սիրտը կը յիշէին:  
 Ան մարգոցմէն մէկն էր Տարս, որուն  
 պարզ լոկ անցնելը տեսնելն ալ մար-  
 դու հաճելի էր: տեսնողը անոր աղե-  
 կութեանը կը զմայլէր: սիրտը հետը  
 կը կապուէր: Ամենում սրտին կծու  
 դառնութիւնը անով կաւելնար, որ ե-  
 րեք բարեկամները կը յիշէին: որոց  
 պէսը տեսնուած չէր. ամէն մարդ ա-  
 սոնց սերը օրինակ չկը բերէր եւ կը գո-  
 վէր: եւ եղեանագործութիւն մը եւ  
 մահը այս բարեկամութեան կապը խը-  
 ցեր էր: Այլեք բարեկամներուն մէկը  
 սպաննուած՝ ճաշին մէջը պատկած էր,  
 եւ բազմութիւնը լալով ետեւէն կեր-  
 թային: Արկրորդը՝ արգարութիւնով  
 բանտի կը զգանքներու տակ փոցուած պա-  
 հուած էր: Ա՛ն է կը սպաննուած. մէկալը  
 արիւնաէր: Իսկ երրորդը, որ ասկէց

Ետքը մինակ մնաց. ճաղին ետեւէն  
կերթար անմխիթար: Ամէնուն աչքը  
Ալֆրէտ Սերլէին վրայ էր, որ մեռե-  
լին մտաւոր ազգականներուն հետ  
ճաղին ետեւէն էր: Ճաղին վրայ պառ-  
կած մեռելին դէմքը՝ անոր վրայ լա-  
ցող բարեկամին դէմքէն աւելի դեղ-  
նած շէր: Արցունքները աչքը մը-  
թընցուցած էին. կոխած տեղը շտեռ-  
ներով կը խարխափէր. ծունկը շէր զօ-  
րեր, եւ քովէն քաղսղ քահանային օգ-  
նութիւնովը հազիւ կարող կըլլար եր-  
թալու. բրածը շգիտնալ կերեւէր:  
Սեռելին կարգը կատարուած ժամա-  
նակը շեկըոցաւ սրտին կսկիծը գըս-  
պել. խորունկէն ողբալուն ձայները  
քահանային կարգացած հոգեւոր եր-  
գերուն ձայնին կը խառնուէր. եւ եր-  
բեմն՝ մարդկային կենաց կարճութեանը  
վրայ սուրբ դրոց ըսածներուն կար-

գացուելը կը խափանէր. Մումնիկի վա-  
րայ եկեր՝ երկու ձեռքովն երեսները  
գոցեր, բոլոր մարմնոյն ջիշերը կը գող-  
գրդար. եւ երբ յուղարկաւորութեան  
հանդէսը կրօնական արարողութիւննե-  
րէն եւ վերջին աղօթքներէն ետքը  
գէպ 'ի գերեզմանատունն ելլել սկսաւ .  
Սէրվէ նստած տեղէն ելլել ուզէլով  
երկու անգամ գեօփնն ինկաւ . եւ դրժ-  
ուարաւ կը սցաւ յուղարկաւորներուն  
մէջ իրանուիլ եւ անոնց հետ քալել :  
Եսս ցաւը՝ որ կեղծիք շըլլալը յայտնի  
էր, ամենն ալ կարեկցութեան շարժեց .  
գրե' թէ ամենքն ալ մեռելը մտցած՝  
անոր այս հաւատարիմ բարեկամին վա-  
րայ ուշադրութիւննին գարձուցեր էին ,  
որն որ իր ընկերին մահը անմխիթար  
թողացեր էր, եւ մի եւ նոյն սրուան  
մէջ իր երկու սիրելիներէն մէկէն կը  
զջտէր : Ըսցուած գերեզմանին քալ



Ուէրվէին կսկիծը կրկնապատկուած կեր-  
բուէր . սասկուժով երեսը անդին կը  
դարձընէր , որ բարեկամին մարմինը  
պարունակող տապանը հողին մէջ ին-  
ջեցընելնին շտեմէ . եւ երբ վրան  
նետուած հողերուն տախտակին վրայ  
Թափուելուն ձայնը սկանջը հասաւ  
սարսափելով ահամայ շարժուժով մը  
եւ եւ գնաց . եւ կը յզուար ձայնով  
մը Շարլին անունը կուտար : Անին տա-  
րին . եւ բոլոր յուզարկաւորները Շար-  
լը եւ Ալֆրէտը կը մեղքընային , եւ  
Սասուֆը կանխէին :

Սէկ երկու օր ետքը Ալֆրէտ սա-  
տմնակը ընդունեց :

« Քեզնէ զատ փաստաբան մը չեմ  
կըրնար գտնել . գիտես զուն՝ որ եւ  
մեր խեղճ Շարլին վրայ բուռն ձեռք  
չէի կըրնար վերցընել : Բարեկամից  
պիտի հաւատաս , երբ ամէն նիւթական

ապացոյցները միարանած են անոր  
 գէտ: Արեւմե կերպը հետո խոսե՛-  
 զիս մտիկ ըրե՛. ինծի պաշտպանե՛:  
 Արեւմեաց սր աչս փորձանքիս վրայ  
 ապրիլ հոգս չե՛. այլ պատիս կը հո-  
 գամ, եւ զիս յա ձեռքդ կը յանձնեմ,

Ուրեմի

## ԳՆՈՒԽ Գ.

### Դասադասական առեան

Ողբալի դասին համբառվը շատ մարդ եկած էր. եւ թան հասկընալ եւ կարեկցութիւննին շարժիլ ուզող բազմութեանը նայելով դատաստանարանը պղտիկ կուգար, մէկ տարսուս մը իմացան հոն ժողվուողները՝ երբ Սոսալֆը զինուորները թերին ամբաստանեալներուն աթուակին վրայ նսանցուցին: Ընչարժ մնաց. ո՛չ ուրիշներէն պահուիլ կուզէր եւ ո՛չ անոնց աչքին երեւիլ. իր մտածումներուն եւ ցաւերուն մէջն ընկղւած էր: Ըռաղկուց

զինքը տեսնողները այն առաջին ուրախ եւ զուարթ եւ շէն մարդը շէին տեսներ՝ որ աշխարհք հոգը շէր. այլ հիւայ գեղնած . մէջքը ծռած . մաշկը ճերմակած . որպէս թէ ապրած օրերը տարի եղած ըլլային :

Հանդիսականները իրարու կըսէին .  
Ի՞նչ զինքը հալեցուցեր է :

— Ընանց պատճառի շէ՛ : Իր մըտերիմ բարեկամն սպաննել . անանկ բարի , անանկ անուշիկ մարդ մը . . . Ըփսսո՞ւ ինչո՞ւն . ամենեւին ասոր վրայ ցաւելիքըս չգար :

Հետաքրքիրներուն աչքը մէկ ուրիշ կողմ մը շարժում մը նշմարելով դարձաւ . Ըլփրեա Աերժէ եկաւ , պաշտպանութիւն ընող փաստաբաններուն կողմն անշաւ նստաւ , չպատմելու կարեկցութեան եւ սիրոյ կերպարանքով մը Արատօլփին ձեռքը բռնելով ան՛կայ

ողջունելէն ետքը : Արիտասարդ փաստաբանին ծանր կերպարանքը այն սրբ սովորականէն աւելի եռանդ մը կը ցուցրնէր . աչքերը՝ տենդի հիւանդութեան բռնուած մարդու աչքի պէս կը փայլէին . կերեւէր որ անհասարութեամբ կը սպասէ դատը բացուելուն , որ իր բարեկամին գլուխը օրինաց վրէժիմեղբու թեան ծանկէն ազատէ :

Պատուօրները եւ երգուեալները եկան տեղերնին նստան . եւ քանի մի նախընթաց խօսքերէն ետքը դիւանագպիւր ամբաստանութեան գիրը կարդաց . որ թէպէտ առդէն ամենքն ալ գիտէին , բայց խորին մտադրութեամբ եւ լաութեամբ մտիկ ըրին : Հարցփորձի սկսուեցաւ : Ամբաստանութիւնը հաստատող վկայները իրենց վկայութեանը մէջ բոլորովին շտկարացան :

Արձարանի կռիւք, Առաօլֆին սպառ-  
 նալէքը, Առաօլֆին այն գիշերը տուն  
 չերթալը. Հարլին հետ անծանօթ  
 մէկու մը նայն գիշերը ըսած կռիւք՝ որ  
 Հարլին տանտէրը լըսած էր. ամէն  
 ալ պատմուեցան. բան մը պակաս կամ  
 երկրայելի չձգելով քննուեցան. Առ-  
 աօլֆ բան մը ըսած չեմ եւ չեմ գիտեր  
 ըսելուն վրայ հաստատ կեցած էր.  
 կուլար, եւ իր անմեղութեանը երդում  
 կընէր. Իսկ զինքը արդարացընելու  
 վկայ բերել տուած չէր. եւ յանցան-  
 քը իրն ըլլալը հաստատելու համար  
 բերուած ապացոյցներուն մէկն ալ չէր  
 տրանար. միայն հասարակ եւ սովո-  
 բական բանի տեղ կը գնէր այն գոր-  
 ծերը՝ որոնք զատաւորները սոսկալի  
 ազանութեան նախընթաց եւ հեռուորդ  
 պարագայ կըսեպէին.

Վազարական փարտարանը խօսիլ

սկսաւ . եւ եռանդուն յառաջաբանու-  
թենէ մը ետքը՝ ամբաստանութիւնը  
հաստատող պարագայները ամէնը մէկ  
տեղ ամփոփեց . եւ անելի ճոխ խոս-  
սեցաւ մարդասպանը եւելոք ատելի ը-  
նող պարագայներուն վրայ . որ մեռու-  
ցածին հետ առսջուց այնքան երկար  
ատեն բարեկամութիւն եւ կատարեալ  
մտերմութիւն եւ իրարու վստահութիւն  
կար մէջերնին : Այս ազգու խօսքերը  
ներկայ գանձագներուն սիրտը բանեցան .  
եւ ամենուն աչքը՝ ամբաստանելու եւ  
ապանալու պէս Առասլֆին վրայ էր ,  
որ այս վրէժխնդիր պերճախօսութեան  
տակը ձեւած կըմնար : Ատրը մէկ մեծ  
լուսութիւն մը տիրեց . Ալֆրէա Սերվէ  
պիտի սկսէր խօսելու :

Ա՛յն սարսուռ մը մտաւ ներկայ  
գանձագներուն մէջ , երբ երիտասարդ  
իստարածին շփոթը եւ յուզմունքը

տեսան . եւ անոնք որ Արարիչին եւ  
ղեւնագործութեանը վրայ զայրացած  
անիկայ կարհամարհէին եւ կը նախատէ-  
ին՝ զգացմունքնին յարգանքի եւ կարեկ-  
ցութեան փոխուցին Արդէն վրայ : Ա-  
սիկայ սաստիկ զեղնած էր . ձեռքը՝ որ  
գրուած քանի մի տեղեկութիւններ սե-  
նէր , կը գողգողար . երկու անգամ խո-  
սելու սկսաւ , երկուքին ալ տկարացաւ .  
քանի մի աննշան բառերէն զատ բան  
չկրցաւ ըսել : Այս անաստոր շիտթը  
հանդիսականներուն սրտին անօվ աւելի  
ազդեց , որ առաջուց գխտին Արդէ-  
ն հաստատուն բնաւորութիւնը եւ  
պայծառ եւ պերճ զրուցուածքը : Այր-  
ջապէս սրտին յուզմունքը դադրեցուց ,  
եւ հանդարտ եւ ծանր զրուցուածքով  
մը՝ ամբաստանութիւնը հաստատելու  
համար մէջ բերուած բոլոր ապացոյց-  
ները մէկիկ մէկիկ քննութեան առաւ ,



կաշխատէր յուր ընկու թէ ուժ մը շու-  
նին անոնք . եւ ատեննին վարպետու-  
թեամբ մէկ տեղ բերած ապացոյցնե-  
րուն կազմածը պարզ տրամարանու-  
թիւնով մը կործանելու :

Վործոյ եւ իրաւանց խնդրոյն վը-  
րայ խօսեցաւ Ալֆրէտ Հանգարտու-  
թեամբ եւ ինքը զինքը բըռնելով . իսկ  
ներսէն սիրտը տակն 'ի վըրայ եղած էր :  
Ասոնք խօսելէն ետքը քիչ մը կանկ ա-  
ռաւ , եւ ետքը Սոսոյֆին դառնալով՝  
որ շնորհակալութեամբ անոր կը նայէր ,  
ըսաւ :

“ Բայց դուք ամենքդ ալ գիտէք թէ  
պաշտարանածս ո՞վ է . ինզ՛ն եւ գըժ-  
բազդ սպաննուածին՝ որուն վըրայ ինծի  
հետ դուք ալ կողքաք , բարեկամը , եւ ա-  
ղէկ բարեկամը : Այս մեռելը ձեզնէ աւե-  
լի կողքամ . վասն զի այդ հաւատարիմ եւ  
սրբազան բարեկամութեան միջև ես էի

երբորչը, անոնց կատարեալ վստահու-  
 թեանը ընդունուած էի. ազէկ գիտեմ  
 թէ որչափ անհնար էր որ Առասուլֆ ա-  
 նոր վրայ եղբայրասպաննութեան ձեռք  
 վերցընէ. ձեզնէ ազէկ գիտեմ որ  
 Շարլը Տարսին կեանքը պահպանելու  
 վահան մըն էր Առասուլֆին կուրծքը. գի-  
 տե՛մ, կիմանա՛մ. որ այս տեղս Առասու-  
 լֆին կեանքն ու պատիւը պաշտպանե-  
 լալս մեր սիրելի Շարլին կամքը կա-  
 տարած կըլլամ: Այո՛, իր ճաղին մե-  
 ջէն անոր ձայնը ինձի կը հրամայէ որ  
 մեր բարեկամին անմեղութեանը վկայ  
 կենամ. անփկայ ինձի կըսէ որ օր մը  
 Աստուածային արգարութիւնը որ  
 թափուած արեան վրէժխնդիւն է,  
 վատ մարդասպանը ձեր ձեռքը պլտի  
 տայ: Մայց այս մարդասպանը Առասու-  
 լֆը չէ՛. մեր եղբայրը չէ՛. մեր բա-  
 րեկամը չէ՛. յանցանքն անորն ըլլալը

պիտի չկրօնաբ ապացուցանել . և և՛  
անոր սրտին մէջ պիտցած ամէն զգաց-  
մունքներուս կողմէն անոր անմղու-  
թեանը կը վկայեմ . և Զերարդարու-  
թենէն կը ինդրեմ անոր կեանքը և  
պատուոյն նորոգութիւնը , որ անխա-  
տելը ազատեցաւ .

Այս խօսքերը անանկ ազգու կեր-  
պով խօսեցաւ , որ կարծես թէ վկայ  
կանչած Շարլին ոգին ամբաստանելոյն  
սրաշտպանութեան կեանքէն . և հա-  
ղիւ այս խօսքերը լքմընցուց , ծունկե-  
րը դողդրդալէն ալ շէր կրօնաբ կայ-  
նիլ . տեղը նստաւ , ուրիշ փաստարան-  
ները քովն կեան ձեռքը սխմեցին , ա-  
տենարանս . թեանքը յաղթութիւն փաս-  
տրկելը վկայելով : Աստուծոյ գէպ անոր  
ծրակելով ըսաւ . « անմղին . » շնորհա-  
կալ ևմ . ինչպէս որ պէտք էր նէ խօ-  
սեցար : . . . Մեանիլս շեմ հոգար .

բայց ամենուն կարծել տալ թէ Շարլը  
ե՛ս եմ մեացուցեր. . . ե՛ս. . . . .

Գատաւտանը կախ մեացած էր  
գատաւորները ամբատանութեան եւ  
ջատագոյնութեան մէջ տեղը տարակու-  
սած էին. ո՛ր կողմը բռնելին շը-  
գիտէին : Վիշ մը ետքը քաղաքական  
փոփոխութիւններ կըսաւ կարճ եւ ամփոփ  
խօսքերով Աերովէին ըսածները հեր-  
քելու. Աերովէ եւս մեղով անոր պա-  
տասխանեց. եւ քանի՛ խօսէր՝ յայտնի  
կերեւէր որ բարեկամին մահուան գա-  
տապարտելու վախը վրանկը զօրանար :  
Ա. շ. ք. : գատաւորներուն անաշառ եւ ան-  
կարեկից աչքին վրայ էր. երգուեալ-  
ներուն մտադիր դէմքը կը նկատէր անձ-  
կութեամբ լեցուած բազմութեան սըր-  
տին ազդածը կը լրտեսէր. մէկ նայ-  
ուածքով կը նշմարէր Ռոստոյիին սրտին  
յուզմունքներէն տալնայ կընչը. եւ

ի օտուածքք քանի՛ երթար կը զօրանար .  
ձայնը գորովաշարժ եւ աչքերը ար-  
տասուալից կը լային : Ար քարեկամին  
կեանքը կը խնդրէր այնպէս զօուցուած-  
քով՝ որ դուցէ իր յատուկ կեանքը ա-  
զատելու համար շէր գործածէր . զի-  
տեւ թէ սիրաը վսխով կտորկտոբ ե-  
ղած՝ դատաւորներուն օտքը կիյնար .  
շնորհ եւ թողութիւն կը պահատէր :  
Աւերբ խօսքը զօղղըղալով պէր զօնք-  
ներէն դուրս կը թափէր , եւ երբ կա-  
տարեալ յաջողութիւն գտնելէն ետքը  
շունչը հատած իր տեղը նստաւ , բո-  
ւոր հանդիսականներուն աչքէն արցունք  
կը թափէր , անոր ազաշանքը՝ որ լսե-  
լի ըլլալու յոյս չկար , ամէնքն սլ իրենց  
սրտին մէջէն կը կրկնէին . եւ Սօսօլ-  
փի դէմ ամէնէն աւելի զայրացածնե-  
րն անգամ թէ որ երգուեալներուն  
մէջ ըլլային՝ նոյն հետայն անիկայ օղջ

և ազատ թող կուտային :

Արդուեալները խորհրդոյ առանձին սենեակը դացին . և ապոնապով և տարակուսանքով լըման երկու ժամ անցաւ : Այս վասնգաւօր միջոցիս Ալֆրէտ Ռոստօլֆէն աւելի յուզմունքի մէջ կերեւեր . ճակատին քրտինքը կը սըրբեր . և առէն անդամին որ դուռը կը բացուեր՝ դէմքին վրայ կապտագոյն գեղնութիւն մը կուգար . որպէս թէ իրեն մեռնելուն վճիռը պիտի լըսէ :

Ա յերջայէս զանգակին ձայնը լըսուեցաւ . երգուեալները ներս եկան . իւր ասոնց զլիաւօրը՝ իրենց վերջին որոշումը նախագահ գատաւօրին ձեռք տուաւ . որուն վրայ գրուած էր : « Յանցաւոր . բայց թեթեւցընող սպարազայներով » : Յանցաւոր մի , գոչեց Ռոստօլֆ . չէ : Աստուծոյ առաջ երգում էր նեմ :

Դտեանք վճիռք տուաւ . յանցաորք  
քսան տարի թին կենալու դատապար-  
տեցաւ : Ա ճիւղ մտիկ ըրաւ առանց բե-  
րան բանալու . առանց նորէն ըսելու թէ  
անմեղ եմ . եւ վերջին անգամ մըն ալ  
Միքիէնին վրայ նայելով , որ գիտես  
թէ թողորովին ոչ ընչացած էր եւ փաս-  
տարանները սրտանց կարեկցու թեամբ  
չորս գին աւեր էին , թող տուաւ որ  
զինուորները զինքն ասեմն տանին :

ԳԼՈՒԽ Ե.

ԱՔԻԵՍ ՍԵՐՎԷ

Գառաատանի ատեն կըրած յուզմունքները երեսուսարդ փաստարանին համար սաստիկ էին. բոլոր անձամբ խախտած էր. եւ դատարանէն դուրս անանկ միճակի մէջ ելաւ՝ որ ատեն գացածին պէս հիւանդացաւ. եւ ժամանակ մը շկրցաւ անկողինէն ելլել: Աւսանդատը հիւանդութիւն մը եկաւ վարան. մեց շարաթ մահուան հետ մաքառեցաւ. չորս ամիս ալ անցաւ մինչև որ կարող եղաւ անէն դուրս ելլելու եւ իր սովորական գործերուն պարագե-



լուս։ Այս միջոցիս մարդ չէր համարձա-  
 կեր ասարքով Արատի փին անունը տալու.  
 կը վսիմային որ սիրաբը կը շարժի եւ հի-  
 ւանդութիւնը կը նարայի։ Անկէց ետքը  
 իմացաւ որ թեպէտ դատապարտելոյն ը-  
 սեր են որ տրուած վճիռը նորէն քըն-  
 նելու եւ ջնջելու իշխանութիւն ունե-  
 ցող ասեանին բողոքէ, բնաւ մէկ կեր-  
 պով մը շէին կարողացեր հանել ցընելու.  
 եւ իր նոր վիճակին նախատեսքն ու  
 վիշտը դարձանայի հաստատութեամբ  
 անձը առերեւ. եւ երկու ամիս առաջ  
 իր պատժակիցներուն հետ զուգում  
 գացեր է։ Այրմալէն առաջ ալ խնամով  
 գոցուած եւ կնքուած ծրար մը ձգեր  
 էր Ալֆրէտին հաննելու համար։ Ալֆ-  
 րէտ ծրարը բացաւ. եւ մէջը իր բարե-  
 կամին մտնացոյցը եւ մէկ նամակ մը-  
 գատու։

1896

Պատին համբար տարածուելով  
հասարակաց ուշադրութիւնը Վ. Ռիբեպին  
վրայ էր։ Ալարմուները, գիւրադրա-  
նութիւնը, պաշտպանութեան մէջ ցու-  
ցուցած հանձնը, իր գծբազդ ապա-  
ւինելոյն վրայ ցուցուցած սերն ու գու-  
թը, ասոնք ամենը մէկ տեղ գալով  
հասարակութեան իր վրայ ունեցած  
վարկու մը շատ աւելցուցին. դասերին  
ասոր յանձնողները շատցան. ապա-  
գային համար աստի՛ց լայնարձակ ճամ-  
բայ մը բացուեցաւ. ամէն կողմէն ասոր  
խելացիութեանը կը դիմէին. դժուարին  
եւ մեծ եւ հաշտեալս դատերը ասոր  
արդարութեանը եւ սրտաւուչ պերճա-  
խօսութեանը կը յանձնէին. քիչ ասը-  
քուան մէջ մեծ յարգ եւ վարկում, եւ  
աւելի մեծ հարստութիւն փաստը կեցաւ.  
Իրրեւ ճարտար փաստարան ըստացած  
պատիւն զատ՝ կը գովէին նա՛ եւ պատ-

ուսուոր եւ գերաշանց եղանակաւ բա-  
րեւիրա մարդ ըլլալը . վասն զի Ալֆ-  
րէտ աղայութեան ժամանակէն ալ ծան-  
րագլուխ էր եւ հասկատ . քանի՛ որ մեծ-  
ցերերնէ՛ այս բնաւորութիւնները վա-  
րան աւելցած էին . փորձեր բրած եւ  
տեսած էր . թշուառութիւն կրած էր .  
ասոնց հով մէկ խիստ վարք մը վարել  
սկսած էր . որով ամէնուն ուշագրու-  
թիւնը եւ սկսածութիւնը իր վրան քա-  
շեր էր . Ամէն մարդ զինքը կուզէր .  
բայց ինքը ընկերութենէ կը փախչէր .  
եւ միայն առանձին՝ կարգալու գրե-  
լու կիցնար . Հարուստ էր . բայց  
գրասանք եւ զուարճութիւն ամենեւին  
աչքը չէին . եւ ամէն մարդ գիտէր որ  
ծածկապէս երեւելի առաստաննու-  
թիւններ կրնէր . Արիտասարգ էր .  
բայց հեշտութիւն եւ փափկութիւն չէր  
ծանշար . ամէն մարդ զինքը կը յար-

գէին. բայց ինք անկեղծ հասկատու-  
թիւն մը ունէր. միշտ ընկերութեան  
մը վերջին կարգը կը կենար. եւ անձ-  
նասիրութեան աղէկ եւ անոյշ գալու  
ամէն բանէն կը փախչէր: Այս թէ որ  
ասեն ասին բարեկամները իրեն վայ-  
րենութիւնը եւ սովորական եղած  
սիրութիւնը չհանելով երեսը կու-  
տային, խռովելով մը կը պատասխա-  
նէր. իմ երիտասարդ տարիքս ի՞նչ ա-  
ղէտալի թշուառութիւն մը թուաւո-  
րեց. գիտէք. երկու բարեկամ, երկու  
եղբայր ունէի. . . երկուքն ալ ո՛ր են  
հիմայ: Թէ որ ասոնք ինձի ետ դար-  
ձընելու հնար ըլլար՝ ուրախ եւ շէն կըլ-  
լայի. կերխաասարդանայի: Բայց անցա-  
ծը միշտ աշքիս առաջն է. ներէցէ՛ք  
ինձի որ իմ արամութեամբս ձեզ ալ կը  
արամեցընեմ. եւ ձեր սղայութեան ըն-  
կերներուն հետ դանուիք նէ՛ զիս մեղ-

քրթիք:

Այս զօրացուածքներս Ալֆրէտը աւելի սիրելի կընէին ամենուն: Չաւկի տեր շատ մարդիկ կը փափաքէին Ալֆրէտը իրենց փեսայ ընելու. վասն զի անցածներուն վրայ այնքան երկար տանն անմխիթաբ մընայլք նշան մըն էր որ սերը եւ հաւատարմութիւնը անփոփոխելի է. բայց ինք կարգուելու կամք ամենեւին ցուցուցած չէր. իր կեանքը յախտենական օուզի նուիրած էր. եւ իր բարեկամները կորսնցունելով՝ յուսացած բոլոր ուրախութիւնները մէկէն կորսընցուցեր էր:

Բայց անոր բնական քաղաքին մէջ անոր վրայ շատ կը խոսուէր: Սուգէն հանելու եւ տրտմութիւնը փոքրատելու հնարքներ կը մտածէին. որպէս զի իրենց ցաւերը մեղմելու յարմար կենաց ընկեր մը գտնէ իրեն. եւ վերջապէս իրեն

սահմանուած պայծառ եւ երջանիկ տեղը  
քընէ լնկերութեան մէջ, ( )ը մը իր  
հօրը մէկ ծեր բարեկամը Պէրգոան՝  
զինքը տեսնելու եկաւ եւ մինակ գը-  
տաւ. որ գրասենեակը նստած էր: Աս  
սենեակը ձգնաւորի մը վայելելու պարզ  
կահարասիք ունէր. եւ բոլոր զարդը  
երկու կտոր բանէ բաղկացած էր.  
մէկը Շարլը հարսին լարմորէ կհասը-  
շանը. եւ միւսը մանրանկար պատ-  
կեր մը որ Պատօյֆը կը ներկայա-  
ցընէր, հարսինը գրասեղանին վը-  
րայ դրած, եւ Պատօյֆինը վաարա-  
նին քով պատը կախուած էր: Այժմ  
բէտ իրեն հերը սուխրական մարդա-  
տիրութեամբ ընդունեց. նստեցուց. եւ  
առջի բերանը աշինչ բա՛կրու վրայ  
խօսեցաւ: Ա՛յ երջը ծեր փաստարանը,  
( վասն զի Պէրգոան փաստարան էր ),  
պատանջ մը երևցաւ. որովհետեւ այն

Երևաատարզը որուն հետ պիտի խօսէր՝  
ձերոյ նման պատկառելի էր. եւ ըսաւ.  
Իմ բարի՛ Ալֆրէտս. հոս մինա՞կ կը  
ձգնիս :

— Այո՛, աշխատութիւնը ինծի ըն-  
կեր եղած է :

— Այլ արժանատի սիրուն, եւ  
առօքինի կիս մը Աւգոստինոսէն եւ Տը-  
րիքանիանոսէն եւ Յուստինիանոսէն՝  
ազէկ շե՛ն մի :

— Տէ՛ր իմ. երբէք կարդուիլ մը ո-  
քէս անցած չէ՛ :

— Վ.ու տեղդ բարեկամներդ կը  
խորհին :

— Այլէկ մարդիկ են. բայց ան-  
պէտ հոգ կընեն :

— Ասկայն թէ ոյ սիրուն եւ բա-  
րեծնունդ եւ բարեկէ՛րթ, եւ քեզի պէտ

1 Բանք երեւելի իրաւարան են. եւ Ալֆրէտ  
ապո՛ջ գիրքը շատ կը կարգար :

Համեստ բաներու ատորժող օրիորդ մը  
ըլլայնէ . . շէ կըսեն՝ ս :

Այժմէս իր ձերուների բարեկամին  
ձեռքէն ըրուց . եւ սրտի մեծ յուզ-  
մունքով մը ըսաւ . ո՛րքան բարի սիրտ  
ունիս . մեծապէս շնորհակալ եմ . շէ-  
տակը ըսեմ . այդ քու ըսածդ կըքնար  
իմ կենացս փառք եւ երջանկութիւն  
ըլլալ , բայց շեմ կըքնար ընդունիլ .  
երբէք շեմ կարգուիր :

— Արբէ՞ք . մեծ խօսք է այդ .  
բայց ինչո՞ւ :

— Իմ կեանքս գառնացընող աղե-  
տալի վեշտերը գիտես . երջանկա-  
թենէ մոլոր յոյսս կըտրած եմ :

— Այո՛ . ստակալի՛ փորձանք էք .  
աղայութեան բարեկամը ողբալի ե-  
ղանակով մը ձեռքէ հանել . մէկ ուրիշ  
բարեկամ մը անանկ եղեանագործու-  
թեան մը համար կորսընցընել՝ օրով բո-



ըբ ընկերու թենեն արաքսեցաւ . յե-  
րաւի գէշ րան էր ասիկայ . բայց ա-  
ռաջին ցաւերը մտնալու համար ըն-  
տանի երջանկութիւն խնդրելու բաւա-  
կան զօրաւոր մէկ պատճառ մըն ալ այս  
չէ՞ մի :

— Չեմ կըրնար եւ բաւականու-  
թիւն չունիմ ո՛չ եւ երջանկանալու եւ  
ո՛չ ուրիշ երջանկացընելու : Միտով  
կտարած է . եւ հարկ է որ քեզի ըսեմ  
տէ՛ր իմ . մտախաբս մէկ րանի մըն է .  
կեանքիս վերջը հասնելու :

— Պարա՛ւ պ խօսք . այդ տխուր մը-  
տածութիւնները մէկդի ձգէ՛ . առա-  
ջող գեղեցիկ ապագայներ ունիս :

— Բայագայն ի՞նչ ընեմ . անցածը  
զարն ո՛ւր ինձի :

— Արեմն խօսք չես հասկընար .  
աղէ՛կ մտած է :

— Միտքս հաստա՛տ է . մտքէս

եւ չեմ կենար :

— Այդ է վերջին խօսքդ :

— Այո՛. վերջին ըսելիքս այս է :

Շները ուսերը վեր վերցուց գլուխս  
հասնելու յայանի ցուցընելով. եւ  
քրթին տակէն մըմըռաւով ըսաւ. կա-  
մապաշտները իրենց ուզածին ձգելու  
է. եւ գաւազանն ու դիխանոցը առաւ,  
որտարեկ գնաց : Ալ քրեւ մինչեւ տա-  
նը դուռը ասոր ընկերացաւ. եւ քը  
սենեակն եկաւ գրասեղանին առաջ  
նստաւ. գաղանի գարակէ մը տեարակ  
մը հանեց. յոր գրեթէ բոլորովին  
լեցուած էր. դողդողացող ջերմութի  
պէս սկսաւ գրել :

Գեորգի Բարսեղյանի «Մարտիկ»

## ԿԼՈՒԽ Զ.

### Օրագիր տետրակ

Վրոյս հեղինակին ներեալ է իր կարգացոյճ իր պատմութեանը նիւթ ըսած մարդուն կենաց գաղտնիքներուն տեղեկ ընել. մենք ալ Ալֆրէտին օրագիր տետրակէն քանի մի երես քան կարգացընեմք:

« Ի՞նչ է արդեօք խոստովանելու այն շահակընալի փափաքը, որ գետնին խորունկը եւ սփկիւմնասի անդ ընդոյ Այքթազել ուղած գաղտնիքներս թղթի կտորի մը հաւատալ կըստիպէ զիս... Կ'մնդակ գաղտնեքը որ զիս կը ճըզէ »

Տոգուոյս վրայ ծանրացեր կը խորտակէ  
եւ կը մաշեցընէ : . . . Աս ասիկայ մար-  
դոց աչքէն ծածկելու համար ամէն  
բան զոհեցի . պատիւ , խիղճ , բարե-  
կամութիւն . բան մը մտիկ չբօի . շո-  
ւեպեցի . այսու ամենայնիւ մէկ անյար-  
թելի շարժում մը կայ որ զիս ինծմէ  
գուրս կը մղէ . ըսել չկրօցած բանս  
գրի ամենչու կրստիպէ : Անանկ է նէ  
եղեռնագործութիւնը եւ կիրքը՝ մեր  
սրտին մէջի արգարութեան զգացմուն-  
քը շնն կը ընար խեղդել եւ բնակիչ ու-  
նել . որովհետեւ ես ո՛րքան ցածն որ  
ինկայ ալ նէ՛ խոստովանելու հարկը կի-  
մանամ . եւ գաղանձիքս այս թղթիս կը  
հաւաստմ . թէ՛ եւ այս խոստովանու-  
թիւնս զիս միշտեւ կազտիման հանէ .  
կամ անուանս մշտնջենաւոր աղա ըլլայ :  
Աս մղմանս կը հնարանդիմ . պէտք է  
որ սրտիս վրայ ծանրացած բնուր նե-

տեմ : Մփստն . հեռացաւ ինծմէ այն  
ժամանակը , որ խոստովանելու համար  
միայն անմեղատ Ժածուկներ ունենալով  
միշտ զիս լսելու համար երկու բարե-  
կամները ի՞նչ ըրի ես : Մհաւոր եւ սըր-  
բազան ձայն մը լսել կը կարծեմ . այն  
ձայնը՝ որ աշխարհքիս նոր ստեղծուած  
տաննը առաջին մարդասպանին ըսաւ .  
եղբայրդ ի՞նչ ըրիր . ո՞ւր պիտի փախ-  
չիս կայեն՝ որ վեճե՛ ինդիր ձայնէն ու-  
ղատիս . յաւիտենականութեան մէջ ,  
բայց Մսաուած ու բարեկամըդ . վե-  
րեճե՛ ինդիրն ու զոհըդ հան քեզի կըս-  
պասեն : Աշխարհքիս վրայ . բայց Առ-  
ասովիին դեմքին ներկայութենէն ո՞ր  
պիտի երթաս :

“ Ի՞նչպէս կը սցայ մինչեւ այս ու-  
սի՞ժանը հասնիլ . . . անանկ մէկ ժա-  
մանակս կը յիշեմ , որ բնու կիրք մը  
սիրտս չէր խռովեր , այո՛ . կը յիշեմ .

Ինչպէս որ մեր նախածնողները եղև-  
 մական գրութիւնք կը յիշէին... գնաց  
 հետացաւ այն ժամանակը. եւ հրեշ-  
 տակապետը բացեղէն սրտից կայներ՝  
 Թող չի տար որ անոր մտանաւ. Նայց  
 Ինչպէս կը ըստայ ասիկայ ընել... Նա-  
 բեկամներս կը սիրէի, ինչպէս որ ա-  
 նոք ալ զիս կը սիրէին. միայն լմե-  
 ծնած ատենէն ունեցած զգացմանը-  
 ներուս քով ուրիշ կիրքեր ծնած էին  
 ու կը մեծնային. մատասիրութիւն.  
 ետքը խաղաւ սէր. ետքը ստակ շահե-  
 շու պիղծ ու ամբարիշտ սէրը, ուի-  
 նա-ի-ր-ի-ս-ի-ս-ի-ս-ի-ս-ի-ս-ի-ս-ի-ս-ի-ս-ի-ս-ի-  
 սեղծը շատ ազէկ ըսած է.

“ ( ) ր մը, որ իմ կենացս անյիշե-  
 լի ամենաշար օրն է, ինք զինքը գրա-  
 մանոցի շահերու տուած մարգու մը  
 պատահեցայ. հետը ծանօթացանք.  
 վրաս շատ սէր ունենալ կը ցուցընէր,

Եւ իր ստակ շահելու կերպին ամեն վարպետութիւնները ինծի սուլօրեցուցարանցմէ անմիջապէս դրամոյ մեծ գումար՝ կը բնար շահուիլ . եւ բազդի եւ հարստութեան եւ աշխարհքիս վայելչութեան փայլուն կողմերը ցուցուց . որով անհամար մարդիկ « գլխէ ելած են » .

« Ա շինն ՚ի վախը մտայ այս թըշուառութեան ճամբան . եւ առջի բերանը քիչ մը ստակ վտանգի մէջ դրի . Վաճի մի ամսոյ մէջ տասնապատիկ եւելցան . եւ այս առաջին յաջողութիւնը շահասիրութեան փափաքս գրգռեց եւ բոլորովին զիս կուրացուց . Խտրդախ խորհրդակիցս այս կերպ յափշտակուիլս իր շահուն բանեցուց . եւ շատ աշխատութիւն շքաշեց իմ ազատութեանս թելերը ամենն ալ գանկու եւ շարժելու , որ այնքան տուներ ալ-

բուեղու եւ յուսահատութեան մէջ  
ի յնալու պատճառ կը լլան: Ինչ որ  
ունէի շունէի. դրամանոց ըստած ան-  
գունդը նեակեցի:

.. Իմ տարիքիս եւ յարաբերութիւն-  
ներուս ձեռք տուածէն աւելի հան-  
գարաւեւ պող եւ ծանր կերեւէի եւ  
զիս խոհեմութեան եւ զգուշաւորու-  
թեան սրինակ մը յուցուցած ասկննին  
կրակներուս մէջ շահասիրութեան կրակ  
մը կը քաշէր. եւ ես խաղաղ մը եղայ.  
այս բառիս ամենէն գեշ նշանակու-  
թեամբը հասկըցուած կերպովը:

.. Ծանր դուխ եւ շափաւորութիւն  
սիրող մարդիկ՝ որ միշտ ասանկ հրա-  
բորբոք փութորիկներէն հետեւ կը պը-  
տըտին, եւ ստակի գլուխէ շահ ընե-  
լու սրամաշուք տենդը ամենեւին քո-  
մեքնին հանդիպուցած ընն. եւ խա-  
ղաջողներուն խենթութեանը եւ կա-



տաղութեանը գաղափար մը չեն կր-  
 նար ունենալ: Աստուած տար որ այդ  
 սուս յոյսերը եւ տխուր տաղնասպները  
 եւ մարդուս բոլոր գործարանը տակն  
 'ի վրայ ընող ուրախութիւնները, եւ  
 մէկ մը ազէկի մէկ մը գէշի դաւնալով  
 բաղդին մարդոյս աղիքները կը տըտե-  
 լը եւ անգութ քնհասութիւնները եւ  
 սոսկալի երազները եւ անկէց անլի  
 սոսկալի արթնութիւնները բուռ շղիա-  
 նային: որանցմով կը տանջուի արծաթ-  
 սիրութեան գեւին ինք զինքը մատ-  
 նող հոգին:

« Չգացմունքը կը մարի. սրտին  
 բոլոր փափակ եւ ազնի կիրքերը մէջ կը  
 խաղան: . . Միայն զարհուրելի կայծակ  
 մը կարող է այդ սարսափելի կիրքովը  
 քար կարած սիրտ մը արթնեցընելու: . .  
 Ա՛լ Աստուած մեր այ զարհուրելի  
 հարուածը զարնողը գուն եղաւ: . . »

11 Հատ ժամանակ շանջաւ . ստա-  
կի մեծ գումարներու պարտքի տակ  
ինկայ : Հայրենի ժառանգութիւնս որ  
շատ մեկ բան մը չէր , վտանգելէն  
գէշ եղաւ : Առաջօր ծանրութեան մէջ  
ծածկած էի զիս ներսէն կրծոց սոս-  
կալի որդը , ամէն գործքերս մէկ ու-  
րիշի մը ձեռքով կրնէի , որ իմ ստակո-  
ւոյս կը հարստնար : Հարլը հարսին  
հարստութիւնը գիտնալովս , մէջերնիս  
բանը խոստովանանք մնալու պայմա-  
նով ծածուկներս բացի որ անիկայ  
ալ իս շահախնդրութեանս ընկեր ը-  
նեմ , առջի բերանը զինքը բացարձա-  
կապէս անհոգ գտայ . ետքը իր բնա-  
ւորութեանը դէմ . որ ամէն բանի դիւ-  
րաւ կը համոզուէր . հաստատ եւ որոշ  
հերքում մը լսեցի , գրամանոցի խար-  
դախութիւններուն բնաւ հաղորդ չըլ-  
լալու շղիաւորութիւնը , ինծի բացէն

խայանեց :

« Այս միջոցիս վիճակս օրէ օր կը գեշեար . կը տեսնէի որ քիչ օրէն ամենը պիտի խմանային սնանկանալս . եւ ապագային ակնկալութիւնս բոլորովին պիտի ոչնչանար : Ա եկ ձար մը մնաց ինձի . բազա փորձելու վերջին ձիգ մը ընել : Արցած աչքերուս առաջը բարեպատե՛հ կարծուած առիթ մը ելաւ : Ա վերջին փրկութիւնս անկէց կախեալ էր . եւ առիթը շքանեց ընէի նէ՛ ամեն բան ձեռքէ կելլէր :

« Այց ստոր համար գրամագլուխ պետք էր . այն ալ քիչով չէր ըլլար : Ա որին Շարլին երթալ եւ պարտաւ ետ դառնալ շուգելով մէկ խաթունի մը գիմել որոշեցի . որ ինձի մօտիկ Նազգահան էր , եւ հանգիստ կեանք կանցընէր գեղը : Արբան թախանձեցի նէ ձեռքս բան մը չկըցայ ձգել . կարծիք

ըրի որ ճարպիկութիւնովս եւ թախանու  
ձանքովս կըրնամ անիկայ վերջապէս  
հաճեցընել. շատ ատեն կեցայ քովը,  
առանց բան մը շահելու: Արոշիչ ժա-  
մանակն ալ կը մտտենար. միայն քանի մը  
ժամ ատեն ունէի խաղալու վարժուած  
երեւակայութեանս ինծի ցուցուցած  
ակնկալութեանս հասնելու. որ միշտ ինծի  
սիրկութեան տախտակ մը բըննած էի:  
Իրիկուան դէմ խաթուսին տունէն  
մեկնեցայ. եւ թէպէտ ժամանակը ուշ  
եւ օգը փոթորիկով շեցուն էր, քաղաք  
դալու փութացայ: Ալուխս կրակ կըտ-  
րած էր. արտորնօք ճամբայ ընելս երե-  
ւակայութիւնս կը գրգռէր: Եւրջ Տարս  
նոր տուն կուգար. անոր հանգիպեցայ եւ  
հետը մէկ տեղ ներս մտայ: Եւրջ  
ինքն ալ սրտնեղութիւն մը ունէր. ես  
մեկէն 'ի մէկ խնդիրս անոր առաջար-  
կեցի. միտքս դրեր էի որ՝ մինչեւ որ

կամ ուղած ստակս կամ մէկ ստորագրութիւն մը ձեռքէն շտանեմ նէ քովէն չըզատուիմ : Հաստատութեամբ եւ ներդարութեամբ մը ինձի պատասխան տուաւ : Ես այնքան յամառութեամբ թախանձեցի՝ որ զինքը վշտացուցի : Կրակ կարեցաւ : Եւ խօսակցութիւնն իսկ լեղուրցաւ եւ ձայներն իսկ բարձրացաւ : Մինակ անոր աչքին շէ՛, իմ աչքիս ալ անձանաչ մարդ մը եղած էի : Այն դժօխային քապէին մէջ բարեկամս կը նստաւակի, կանարգէի : Արդ՛ապէս ա՛լ համբերութիւնը թողորովին հասաւ : սաստկութեամբ ինձի ըսաւ Շարլը : դ՛ուրս, դ՛ուրս ելիր : սենեակս մի՛ կենար : Եւ դուրը անանկ կերպով մը բացաւ, որ ինձի սպառնալիք երեցաւ :

« Այլայ : Ես իմ անձէս վախճալ սկսայ : . . . Հա՛նի թէ երկրորդ ժող-

դրցին ծայրը հասած էի, խնացայ որ  
և տեւէս մէկը հեղալով կը վազէ, կայ-  
ծակին լոյսովը Շարլը նանչցայ. ձեռ-  
քը ինծի երկնցուց: Արթեցի որ զիս  
նախատելու կուգայ . . . ձեռքէն դա-  
ւազանը յափշտակելուս պէս զարկի: . .

« Լըֆրէտ, հետզ հաշտուելու կուգա-  
յի կոր », ըսելով ինկաւ: Լոյս ձայնը  
ականջէս շելք մինչև վերջին օրս:

« Ընկէց ետքը մէկ մըն ալ շխտե-  
ցաւ. երեսի վրայ գետինը փրսուած  
մնաց. վերցուցի. շարունակ փայլատա-  
կող կայծակներուն լուսովը երեսը նա-  
յեցայ. գոյնը նեւած անշարժ մնացեր  
էր. աչքերը բաց ու տընկած. եւ բե-  
րանն ալ բաց էր մնացեր. . . . Սուկալի՛  
տեսիլ: Շարլը մեռեր է. մեռցընողն  
ալ ես եմ եղեր:

« Սարմինը հոն ձգեցի փախայ . . .  
վատ ու թշուառական. իմ մեռցուցաւ

ձիս վրայ եւ չէի կրնար նայիլ . . . ար-  
քաշեալ դիտաւ որս թխն մը շունեկն ալ  
գեղին ճամբան բընեցի . գեղի արնեկն  
ինչպէս որ ելեր էի անանկ մտայ . ո՛չ  
եղևըս տեսնող եղաւ՝ ո՛չ մանեղս .  
վախն ու ամօթը բնական աղղճամբ մը  
դիս ստիպեց սենեակին մէկ անկիւնը  
երթալու կրճկըտելու : Չհասկըցուե-  
լու ապշութիւնով մը՝ որ խենդութեան  
կը մտենար , երկօր ժամանակ հոն մը-  
նացի : Ալիուս մէջ երկու տարբեր  
խորհուրդ իրարու կը զարնուէին : Մէկ  
մարդ մը մեռցուցի . բայց մեռցուցածս  
ո՛վ էր . Շարլս : Աս ինձի այս պա-  
տասխանս որ կուտայի՝ խնդիրը նորէն  
կըսկըսէի . բերանս գեանին տալով  
ձայնս կը խափանէի . մաքիս համոզու-  
մը բերնէս դուրս քաշած խօսքերը չէի  
ուզեր որ մարդու ականջ հասնի : Արք  
աւտու եղաւ . եւ մարդոց ձայնը տ-

կանգս հանելով դիս արթընցուցին,  
անձա պահպանելու բնական ազգամբ  
մտքիս վրայ զօրացաւ. վաս եւ սոս-  
կալի սարսափ մը ըտլոր անձինս վրայ  
տիրեց. Կրե՛ թէ սպանութիւնը մտա-  
ցայ. խելքս միտքս դատաստան եւ  
դատաւոր եւ կատարիման տեղ կերեւա-  
կայէին: Այս՝ որ մտացուիչ եւ լուսութիւն  
եւ մահ կուզէի փափաքով, ապրիլ ինչո՞ւ  
կուզէի: Աւա՛ղ. ասոր պատճառն այն է՝  
որ մեռնելը ոչնչանալ չէ. մարդկային  
արդարութեան պատճառած խայտառա-  
կութեանը եւ ցաւերուն մէջէն՝ յափտե-  
նական արդարութեան անհաւատալի  
խորութիւնները միտքս եկած ժամերը՝  
որ ըրած շարութեանս վրէժիմնդիր  
էին. մեռնելէն կը վախնայի եւ ապ-  
րիչ կուզէի:

« Ապրեցայ. եւ առտուանց մար-  
դիկ մէկ տեղ ժողովուեցան նէ՛ հան-



դարս երեսով ես ալ մէջերնին գտնուեցայ: Աղէտաւոր լուրը մինչեւ մեր ականջը հասաւ. ես թէպէտ խաղցող կատարեալ վարպետի մը պէս զարմանք կը կեղծէի. եւ քովիններս՝ ասանկ սաստիկ ցաւէ պատճառաւ տխուրութեանս վրայ զիս մխիթարելու կաշխատէին. բայց իրիկունը երբ Սոսուֆին բանուելուն ու բանտարկուելուն համբաւը տարածուեցաւ, գո՛նէ այն տուննուան իմացած սաստիկ յուզմունքս եւ խռովիլս կեղծիք չէր: Արնայ եղեր մարդ անանկ ապնայներու համբերել ու շնորհ: Միտս ու ճակատս պղինձէ եղած ըլլալու են:.. Աորեն քաղաք դարձայ. եղած հարցութորձին ամէն պարագայները եւ խեղճ Սոսուֆը մտելին քովը բերելնին՝ որուն իր կեանքը վտանգելով անգամ պաշտպան կենալու պատրաստ էր, իմացայ. ամ-

բաստանութիւնը անոր վրայ բերող  
կուտակող պատճառները հասկըցայ  
եւ ես զիս բերան չէի տար: Առաջի-  
նին վրայ երկրորդ յանցանք մըն ալ ա-  
ւելցուցի, որ առաջինէն հազարապա-  
տիկ ծանր էր. Արլը իմ բարկու-  
թեանս զոհեցի. բայց Առաջի՞ք իմ վա-  
տութեանս զոհեցաւ: Այրիչ կուզէի.  
լուծիւնս ամուր բռնեցի. Առաջի՞ք  
կամբաստանէին, ես կըլուէի. կը քա-  
չէին վատահամբաւութեան ամբողջ կը  
նստեցընէին, ես կըլուէի. իմ լու-  
թեամբս անոր համբան ու կեանքը  
յափշտակեցի. ես լուծիւնս բնա-  
չէի արէր: Ինքն ալ բնաւ մէկ բանէ  
մը կասկած չունենալով իր պաշտպա-  
նութիւնը ինծի յանձնեց: Արախու-  
թեան զգացմունքով մը ընդունեցի.  
կը յուսայի որ կազատեմ. . . բայց ար-  
դարադատն Աստուած ինծի անանկ

վասք մը և անանկ զորաւոր միսթա-  
րութիւն մը շկանցաւ . և ո՛րքան զանք  
ըօի ալնէ՛ Սուտօլֆ դատապարտեցաւ .  
բունի աշխատութեան դատապարտեցաւ :  
Աճիտը լսեցի , և լսեցի : Մարելու  
վաս սէրը յաղթեց . և իմ թշուա  
սրտիս վրայ խղճմտանքիս խայթոցը  
այնքան ուժով շեղաւ որ դատաւորնե-  
րուն ստքը իյնամ և ևղենապօրծու-  
թիւնս պատմեմ :

« Երկայն հիանդութիւն մը՝ այս  
մտաւանդութիւններէս քիչ մը ազատ-  
ուելու ժամանակ տուաւ ինձի . յնա-  
կան ցարը զիս թմրեցուց . բայց ես  
մարդուս ուժին կարողացածէն աւելի  
կաշխատեի որ տենդին ատենը վրաս  
եկած ցնորքներուն մէջ գաղտնիքս չը  
յայտնեմ . այն գաղտնիքը որ սիրտս կը  
մաշէր : Ի՞ժ կուեցայ , և Սուտօլֆին  
կողմէն ծրար մը ինձի տուին . որուն

մէջ իր ժամացոյցը կար. եւ վրան գըր-  
ուած էր, ինչպէս զգանիս: Էտան ալ  
տունակ ժը, սա կարճ խօսքով.

“ Եւ Ալֆրէտ

“ Կարճ եմ յանցարորը գիտեմ.  
“ Բայց կըրահած գաղտնիքս երբէք  
“ չե՛մ յայտներ. [Թող ապրի եւ գիտնայ  
“ որ Առատօլֆ անոր կը ներէ, ]:

“ Եւս անակնկալ խորհրդաւոր  
խօսքերը մտքէս ամենեւին շնն ելլեր.  
Կեանքիս յուզմունքներուն մէջ Առարիւծի  
[Թաշաւորին աչքին առաջը պատին վը-  
րայ գրուած խօսքերը գարձան ինձի:  
Շարլին մեռած ատենուան խօսքը,  
զինուորները Առատօլֆը տարած ատեն-  
նին ռոգաւնայ ինձի նայելը, քեզի հետ  
հաշտուելու կուգայի կար ըսող ձայնը.  
Իմ խղճմանքիս թողորով, եւ զիս շե՛ս  
Քի ազատեր ըսելու պէս ինձի գարձան

նայուածքը՝ կրելու դատապարտուած ա-  
հաւոր պատիժներս են. Չմեռնող որ-  
դը, շմարելու կրակը ամէն տեղ. հետս  
կը կրեմ իմ կտոր կտոր եղած սրտիս  
մէջ. ամենէն աւելի դիտցածս՝ Մատու-  
ծոյ արդար դատաստանին երկխոզ եւ  
իմ նոյն իսկ իմ անձինս վրայ ազդած  
սոսկալի սարսափն է:

« Մյս յուզմունքներովս կըրցու-  
նասցիք իմ աղէտաւոր դաշտնիրս դու-  
շակելու: Մյն բանն որ ամենուն աշ-  
քէն եւ եղևունացործութեան ամէն կեղ-  
ծիքները ու խաբերայ շամբաները  
Քանչնաչու վարպետ եղող արդարու-  
թեան հետազօտութիւններէն պահե-  
լու կարող եղայ, աղայութեանս ա-  
տենէն ունեցած մարեկամիս՝ աշքէն  
չեմ կըրցեր պահել, որ հոգւոյս բոլոր  
ծալքերը դիակեր, գէմքէս շարժմունքէս  
եւ խօսուած քէս կը հասկընար: Արիշ-

Ներուն չը կրնայ նկատելու մանր բաներ  
զիս անոր մատնեցին : . . . Իմացաւ եւ լը-  
տեց . . . ա, նպէս արիւթ իւն մը՝ որ զիս  
կը ձրզմէ եւ ամս ժապարտ կրնէ : . . . Ըն-  
տեղ էր . ամէն առաքինութիւն անոր դիւ-  
րին էին . ես յանցաւոր, քարսիրտ,  
կրկնապատիկ մարդասպան, իմ եղբայր-  
ներուս կեանքը եւ պատիւը յափշտա-  
կող եւ փձացընող . ա՛լ ձեռքէս ո՛չ ա-  
ղէկս եւ ո՛չ արգար բան չէր գար : ուժ  
ունիմ եղեր մարդ մեռցընելու համար .  
հաստատութիւն ունիմ եղեր լուելու  
համար : . . .

11 Ըշխարհք ալ զիս կը պատուէ :  
Ինծի եղած յարգը զիս կը նեղէ . ես  
ասով իմ աչքիս աւելի անարգ կերե-  
ւիմ : Ինծի արուած ամէն մեծ արանայ  
եւ յարգութեան նշան՝ ինծի նախա-  
տիմք է . իմ խղճիս դատողական աս-  
եանին առաջը որ օրէ պատիւս կը կոր-

արնցնեմ, այն յարգութեան և սուս-  
գանաց նշաններն ընդունելով, որոց  
բոլորովին անարժան եմ. աշխարհքս  
խարուելով ինձի պատիւ և անձամեծ  
անուններ որ կուտայ՝ իմը չեն, և վրաս  
կը ծանրանան :

« Եղեանադործ եմ իրաւ . բայց  
խեղճ ալ եմ . մէկ ժամ մը դուարձու-  
թիւն, մէկ րոպէ մը հանգիստ չունիմ :  
Մտնեմ մը սիրած զիճակս հիւսայ ինձի  
ասելի է . դատաստանական ատեանին  
հարցփորձերը, փաստարանութիւնները,  
մի՞թիւն յիշատակագիրները՝ որոցմէ արիւն  
կը հոսի՝ իմ գեշութիւնս միայն կը  
բերեն . գիտես թէ հրացեալ երկամ  
մը հողիս կը տաղէ . աշխարհքիս հեշ-  
տութիւնները ինձի հա՛վար չեն : Մա-  
րեկամութիւն մի . ախսո՛ս . բարեկամ-  
ներս ի՞նչ ըրի . եղբայրներս ո՞ր են .  
որոց անհամեմատ սէրը իմ անօրինակ

եղևոնագործութեանս ներեց։ Անցած ըստած ելու շեմ համարձակիր. ներկայն ինձի տանջանք մըն է. իսկ ապագայն։ Չեմ կրնար խորհիլ։ Պիտի ապրի՞մ։ Հիմայ ինչպէս եմ նէ անա՞նկ պիտի մեռնիմ։ Ամենուն ինձի ըսած յարգութիւնը ինձի ատելի՞ է. զիս կը նեղէ. կը նախատէ։ Աղէ՛կ. բայց ինձի պէտք ալ է. առանց անոր չեմ կրնար ըլլալ. ամենուն առաջը խայտառակուելու գաղափարն ինձի անտանելի՞ է։ Մարդոյս հոգին ի՞նչ անխմանալի հակասութիւններ ունի։ Աս զիս կանարգեմ. զիս ինձ մէ կը գարշիմ. բայց ուրիշներու իմ վրաս իմ արժանի եղած իս պէս վարկում ունենալն ին ալ չեմ կըրնար վերցընել։ Մակայն ծշմարիտ քաւութիւնը այս պիտի ըլլայ։

«Առանձին կապրիմ. հեշտութեան ճաշակներ առած չեմ. աննեահարկաւոր



բան մը չեղած՝ առանձնութենես չեմ  
ելեր. մարդ չեմ տեսներ. բարեկամի մը  
սեղան չեմ նստիր. եւ իմ տանս մէջ  
ես զիս կը զրկեմ. թէպէտ թեթեւ  
բաներ են ասոնք, թէ որ Սոսոյֆին  
ի՞նչ բաներէ զրկուիլը լինեմ. Սայց  
թէ՛ եւ ճշնասրներուն ամէն սոսկալի  
ճշնութիւնները վրաս առնեմ, ծովով  
եւ հսկումով մարմինս նեղեմ, բնաւ  
մէկ հատուցում մը ըրած պիտի չԸԼ-  
լամ. . . Իմ քսութիւն գտնելս միայն՝  
յանցանքս հրապարակաւ խոստովանե-  
լով կրօնայ ԸԼալ :

» Քիչ մը աղէկութիւն ընելու կաշ-  
խատիմ. վաստըկած ըստակս կուտամ,  
եւ կրնամ ալ շատ տալ. վանդի իմ  
նիւթական պիտոյքս խիստ քիչ են. .  
Արբ զիս՝ որ օրհնութեան բնաւ ար-  
ժանի չեմ, խեղճ մարդիկ կօրհնեն,  
քիչ մը կամը շնամ. քիչ մըն ալ կուրա-

խանամ: Տայց թէ որ գիտնային թէ  
 իրեւց սղորմութիւն տուող ձեռքը  
 ինչ արիւնով աղտոտած է, անանկ  
 ձեռքէ սղորմութիւն արդեօք կընդու-  
 նէի՞ն:

« Այս մանր մանր ծառայութիւն-  
 ներուս մէկ քանին՝ այս ծառայութիւն-  
 ներն ընդունողները հրատարակեցին.  
 Եւ դժբաղդաբար հասարակաց ուշա-  
 դրութիւնը իմ վրաս դարձուցին: Չը-  
 գիտեմ ո՞ր մարդասիրական ընկերու-  
 թեան նախագահ ուղուեցայ. ուրիշ  
 ընկերութեան մը դանձապետ խնդրե-  
 ցին: Այս վստահութեան վկայութիւն-  
 ները ո՞րքան ամօթով հոգիս կըլեցը-  
 նեն: Ա՛մ շքայ. մերժեցի: . . . Այն ան-  
 անը սկսան համեստութիւնս գովել.  
 Եւ կիսանամ որ հասարակաց կար-  
 ծիքը քանի՛ երթայ՝ աւելի սխալելով  
 զիս կը գովէ եւ կը բարձրացընէ: Իմին

երթալը եւ խայտառակութիւն վերջապէս  
պատիժ կրելը այս փառքերէս հաղա-  
քապատիկ աղէկ շէի՞ն մի ինձի:

.. Վուն շունեցած գիշերներս Ռու-  
տովֆին պատկերը մըտքիս առջևէն չէր  
զատուեր: . . Վո՞ղեմ, ձերմէկեմ, ան-  
ողորմ շարձարանքներու եւ մեռնելէն գէշ  
անպատուութեան դատապարտուած կը  
տեսնէի. ինձի անանկ կուգար թէ՛  
«տակաւին ժամանակ կայ. դիտ աղա-  
տէ՛» կրէի: . . Վո՞նե հոն կրնայի վը-  
ճարք մը ընել: . . Շարչին ու իմ մէջ  
տեղս մահը պատ քաշեց. հապա Ռու-  
տովֆը. հապա Ռուտովֆը: կրնայի ետ  
անհկայ աղաւել. նորէն կենդանազը-  
նել. բայց վատ սիրտս այդ մտածմուն-  
քը մերժեց: . . Վշելի գիւրին էր ինձի  
մեռնիլ: թէ որ շարագործութեան վը-  
րէժխն գիր Վրտուծոյ վստահ բլբլը մըտ-  
քիս մէջէն ինձի շքսէր՝ որ կեանքս ո՛ր-

քան դառն է նէ՛ մահն ալ այնքան ա-  
հարու է . . . . .

« Աս զիս աղէկ եւ անբամբասելի  
եւ ամէն փորձութիւններու տակ իյնա-  
լէ հեռու մէկ մը կը կարծէի . սա-  
կայն մէկ րոպէն զիս մարդասպան եւ  
ստերզումն, եւ բարեկամութեան եւ  
պատուոյ ամէն ձայներուն խուլ մարդ  
մը բրաւ : Ինչո՞ւ համար : Արտիճեալ  
անձնասիրութեան աղէտասօր կիրքի մը  
տեղ բացի սրտիս մէջ . անփափաք-  
ներ ունեցայ . որ դատուած կարացու-  
ցին եւ խղճիս ձայնը խափանեցին . . . . .  
. . . . .

« Իրօտօլֆին մայրը ինծի գրեց . զիս  
տեսնել ուզեր է . եւ կաղաչէ որ մէկ մը  
գեղին տունը երթամ , որ առանձնա-  
ցեր էր : Ինչպէս անհանդիստ էի եւ  
ստեղծմը զիս պատեր էր , ասոր ոտի-  
պողական հրաւերին գէմ գնելու

Տատարձակեցայ : Տնաղանդեցայ :

« Ի՞նչ օր, եւ ի՞նչ աղէկըսուր  
տագնապներ անցուցի : Ատամ աը  
Լաննուային առանձնացած աղքատիկ  
մնակարանը հասայ նէ, որ շատ ատե-  
նէ 'ի վեր խաթունը օրէ օր հաշելու  
եւ մաշելու վտանգաւոր վիճակի մը մէջ  
ինկած էր, այն օրը վերջին շունչին  
մօտեցած պայ : Վացին զալս իմացու-  
ցին . եւ մինչեւ եկան նէ՝ խոսպանացած  
պարտեղի մը մէջ կը պըտըտէի . ուր  
կաղամբներու եւ թրթնջուկներու քանի  
մի ածուներուն մէջէն մէկ երկու ա-  
րեւած աղէկ գլուխնին բարձրացուցեր  
էին : Ա՛յն հին հիւղին ակրակ վիճա-  
կը . պարտեղին անգարտան մնալը , բա-  
լորս եղած ամէն քաններուն հին ու մա-  
շուկ եւ անց որժած ելի տեսըը՝ ինծի ու-  
նակութիւն եղած տխուր խորհուրդնե-  
քուս ակելի մթութիւն տուին : Արտաշ

իր աշխատութիւնսն եւ իր հանձարովը  
տանը ակնկալութիւնն էր. իր ձերու  
նի մօրը կեանքին մնացած օրերը կը  
նար հանգիստ անցընել. եւ քոյրը պատ  
ուարօր եւ աղէկ վիճակի մը հասցընել.  
. . . Հիմայ մայրը մինաւորիկ ու աղ  
քատ է. քոյրը օտար երկիր գացեր է.  
եւ այն օտարութեան մէջ ուտելիք հա  
ցը կը վաստըկի, որ անշուշտ դառն ու  
լեղի է իրեն: Աստիք ամէնն ալ կ'ա բ  
րի: Այս ընտանիքը երջանիկ եւ պատ  
ուար էր. անպատուութեան մէջ ձը  
գեցի: Իսեղճ կիներ զիս կը սիրէր. որ  
պէս թէ մէկ զաւակն ալ ես բլբլի. իր  
ձերութեան օրերը դառնութեամբ եւ  
ցաւով կ'ա լեցուցի: Իմ պատճառաւ  
է, ինծի համար է որ պիտէ մեանի.  
մինակ գուցէ յուսահատած ալ: Արի  
կայ ալ ես կը մնացընեմ կ'որ: Այս մը  
քած ութիւնները որ ճիշդ եւ ճշմարիտ էին

նեախի պէս սիրտս կը ծակէին . եւ երբ  
 եկան ինծի խնայուցին որ մատամ ալ  
 Վաննուան ինծի կըսպասէ՝ ծուռկերս  
 իր սր զարնել սկսան : . . . Վիտեա թէ  
 մահուան վճիռս շնելու համար կանչու-  
 ոած մահապարտ մըն էի : Վե՛ ներսիս  
 խորվումիւնը երեսէս ալ կերեսէր .  
 բայց տեսնողները այս ալ ամեն ա-  
 տենուան պէս աղեկ մտքի տարին :  
 Ինչո՞՞հ հիւանդը իր ակար ձեռքը ինծի  
 երկընցուց , եւ ձայնով մը՝ որ միայն  
 լսկ շունչ մը մնացերէր , ըսաւ . ինչո՞՞հ  
 Մէքրեաս եկա՞ք . այցելում ենե՞զ եւ  
 հաւատարիմ քարեկամութենե՞զ ո՛րքան  
 գոհ եմ .

,, Պատասխան չկընցայ տալ . գը-  
 լուխս ձեռքին վրայ ծուռկի , որ իմ  
 ձեռքս սխմել կուզէր : Վ՛սաւ . քեզ տես-  
 նել ուզեցի որ մեր Սրաօրիքին վրայ քիչ  
 մը հասնիմք . ո՛րքան կը սիրէիր անխկայ ,

և միշտ ալ կը սիրես. դուն. ես վշտ-  
առաջ եմ. դուն՝ որ անոր պաշտպանն  
ու բարեկամն ես. եւ անխկայ քեզ ի-  
րեն եղբայր կանուանէր. 4)է՛. դուն  
անխկայ մտացած շես կը ընծար ըլլալ:  
„ Ինձա՛ւ երբէք. ըսի անոր:

— „ Ուժ մը աննելով ձայնը քիչ  
մը զօրացուց ու ըսաւ. ա՛հ. մի՛ մտ-  
նար անխկայ. ո՛րքան խեղճ է. կարօտ  
է որ սիրուի եւ մօքէ շելլէ. ասոր  
համար քեզ աղաչեցի որ մնանելէս ա-  
ռաջ մէկ մը տեսնուի՛ք, որպէս զի ան-  
մեղ եւ դատապարտուած զաւակս քեզի  
յանձնեմ. կը տեսնես. . . կը մնանիմ  
կոր. խեղճ աղուս անպատուութեանը  
եւ թշուառութեանը վրայ շկզջայ  
ապիլ. բայց բարեբարին Մատուծոյ  
քոյն երթալէս առաջ ուզեցի անխկայ  
բարեկամ սրտի մը յանձնել. քեզի՛  
յանձնել սիրելի՛ Մ. Քրէտ:



„ Խօսելէն յօգնելով քիչ մը լռեց-  
 ցաւագին աչքով մէկ մը խաշելու թեան  
 պատկերին նայեցաւ . բայէ մը լռու-  
 թենէն ետքը նորէն բսաւ . դուն ա-  
 նոր պիտի պաշտպանես . այնպէս շէ-  
 քու ձեռքէդ շատ բան կուգայ . քեզ  
 կը սիրեն ու կը յարգեն . . . դուն . ո՞վ  
 գիտէ . դուցէ պատիժը քիչ մը թե-  
 թեւցընել կը ընաս տալ : ո՞հ . Լ. Ղ. Գ-  
 բէտ . շեւ անհոգանար . անանկ շէ՞ :

„ Պատասխան չէի տար . խիղճս  
 եւ ցաւս զիս կը խեղդէին : Լ. նկողնին  
 մէջ նստաւ . գերմարդկային սեժով մը  
 ձեռքս բռնեց եւ բսաւ . անմեղ ըլլա-  
 լուն կը հաւատաս . շէ՞ մի :

— „ Լ. յո՞ , ըսի . երդում ալ կընեմ :

— „ Լ. ճ . սա՛ խօսքիդ համար  
 Լ. ստուած օրհնէ քեզ . այո՛ . անմե՛ղ է  
 խեղճ տրդեկս : Լ. նիկա՞յ մեռցընէ իբր  
 բարեկամը , իրեն եղբայրը , իրեն Ը. ար-

լը, անիկս՞յ մի՛ որ այնքան բարեհաբու  
եւ եղբայրասէր է։ . . Մշխարհքիս վը-  
րայ ո՛րքան վկայ կան՝ անոր դէմ խօս-  
քերնին մէկ ընեն աչնէ՛ և՛ ստակաւն  
կաղաղակեմ թէ անմեղ է։ Մինակ  
մայր մը կը ընայ իր զաւակը ճանչնալ,  
եւ Սրտօղիս պատեմ, գիտեմ որ ու-  
րիշէ մը յանցանքի համար կը շարշար-  
աւի եւ կը մեռնի։ Մ.Տ. Մստուած ար-  
դա՛ր է. որ մը յանցանքին բուն տէրը  
պիտի ճանչցուի եւ խայտառակուի՝ եւ  
ճախատուի։ Մարդէն անշուշտ խիղճը  
զինք կը տանջէ։

— ,, Մուկին ալ վրէժդ կաննէ .  
ըսի ցած ձայնով։

— ,, Ա ընժ ինձրութիւն շեմ ու-  
զեր ըսաւ . մահուան պատրաստուած  
աւենա կիրքերս Մստուծոյ զոհեցի .  
լուսթիւնովը իմ զաւակս թին խրկող  
մարդուն ներեցի . Մստուծոյ ալ կաղա-

չեմ որ անոր զղջում եւ դարձ տայ . . .

« Այս որ ըսաւ՝ սիրոս կտոր կըտոր եղածի պէս բան մը գղացի . խըղձին ու ցառոյն դառնակսկիծ վիշտերը վրաս թափեցան . Չայն մը ներսէս կըտէր . սա հոգէվարք մտրը տղուն ազատութիւնը՝ խոստացի՛ր . բայց ես լըսեցի . ինչպէս որ գատաստանին ատենը լռած էի :

« Սա աւամ տը Լաննուա շատ տըկարացած կերեւէր . այս խօսակցութիւնը զինքը խռովելով կեանքէն մընացած քիչ մը ուժն ալ մաշեցուց : Աւազի ժամացոյցը շատկէկ թօթուեցաւ . ժամը լըմըննալու քիչ մը աւազ մնացեր էր . այս թօթուելովը այն ալ թափեցաւ . ժամը լնցաւ , աչքերը մթնեցան . նայուածքը անորոշ եղաւ . ձեռքը իմ ձեռքէս բռնել ուղեւով շէր կըրնար շիտկուիլ . համարձակեցայ իմ

մեղսագործ շրթունքս այն պատուական  
ձեռքի՝ դպցընելու . աչքէս ակամայ  
Թախած արյունքս ձեռքը թրջեցին :

— « Կուլա՞ս, ըսաւ . Սոսուֆին  
վրայ կուլաս, սիրելի Լեֆրէտս . ա-  
նկից ձեռքէ չե՞ս ձգեր . անոր կօգտ  
նե՞ս . ինձի պատասխան տուր :

— « Հնած ձայնով ըսի . ամենայն  
գօրութեամբ :

— « Ա՛վ գիտէ . գուցէ ճշմարտու-  
թիւնը կը թագաւորեցընես : բուն մար-  
դասպանը երեսան կը հանես . զակիս  
աղատութիւնն ա պատիւը նորէն կը  
վասակցընես : Ընոր պաշտպան կե-  
ցար . անմեղ ըլլալուն կը հաւատաս .  
անոր բարկամն ես : . . . Ը՛ն . այս է  
անոր վերջին նամակը :

« Հազիւ կը սցաւ բարձին տակէն  
նամակ մը հանել, որուն ծալքին տե-  
ղերը մաշած էին . եւ ինձի երկընցուց :

Ներսի դիէս զողջով բացի եւ գիրը  
Ճանչցայ, որ շատ անգամ բարեկամու-  
կան ուրախութիւն պատճառած էր ին-  
ծի: Կրածն այս էր:

“ Սիրելի՛ եւ բարի՛ մայր:

“ Հատ կը ցախս. եւ քու ցաղ  
,, իմ քաշածներս կաւելցընէ. բայց ա-  
,, պահով եղիր. հոս աղեկ եմ. ըն-  
,, կերներէս աղեկ կը նային ինծի: Ան-  
,, բեկին գրասենեակները կաշխատիմ.  
,, շղթայ չունիմ. ինծի հետ կապուած  
,, շարագործին ընկերութենէն ազատ  
,, եմ. միայն դիշերները պատժակիցնե-  
,, րուսքով կը մնամ: . . . Երկար եւ գէշ դի-  
,, շերներ: . . . Ե՛տ սիրելի՛ մայր. քո  
,, սիրոյդ յիշատակը զիս կը զօրացընէ.  
,, ամէնէն աւելի զՆստուած մտածելս

11 չօգուցա չառաարա թիւն կուտայ :  
11 Հոս . վիշա կրած օրերէս , անքուն  
11 անցուցան գիշերներէս սովորեցայ վըշ  
11 տացեալներուն հզօր օգնականը ճանշ-  
11 նալ ու սիրել . որ իր համբերող բա-  
11 զուկը զոպարտուած եւ ճնշուածնե-  
11 բուն կերկնցընէ . եւ իմ վիճակս բը-  
11 նապէս թըշուառ երևի ալ նէ՛ անանկ  
11 վայրկեաններ կըլլան որ շղթաները  
11 կօրհնեմ . մտածելով որ հոս նորէն  
11 քրիստոնեայ եղայ :

11 Ինծի հետ եւ ինծի համար Մա-  
11 տուծոյ շնորհակա՛լ եղիր սիրելի  
11 մայր . կեանքն ու ցաւերը կանցնին :  
11 Վիշ տարիէն , դուցէ ալ քիչ ամիսէն ,  
11 իրարու հետ պիտի գտնուինք յաւի-  
11 տեանն . որդար գատաւորին առաջը :  
11 Հոն պիտի տեսնես մա՛յր իմ , որ զա-  
11 ղակդ մարդասպան չէր : Բայց մայ-  
11 բօժան սիրաը իմինս պիտէ , անսկե-

27 զուԹեանս վրայ կասկած ըրած չէ՛ .  
 28 մայր իմ, Հարդը մեզընողին եւ Ռո-  
 29 սուլֆին պատիւը կորսնցընողին հա-  
 30 մար աղօթեմք . որ ինծմէ շատ թըշ-  
 31 տառ է . . . Մընաս բարով սիրելի՛  
 32 մայր . պատուական ձեռքերդ կը համ-  
 33 բուրեմ ու կը սխմեմ . եւ կաղաչեմ որ  
 34 իմ վիճակիս վրայ շատ չք հոգաս .  
 35 Ըստուած ինչ կամեցեր է նէ դուն  
 36 աչ նոյնը կամեցի՛ր ինծի՛ պէս : Օր-  
 37 հնեալ ըլլայ . եւ աչքը միշտ վրայդ  
 38 ըլլայ ։

Չաւսիչ Ռոսուլֆ

11 Ըստ մամակը զիս բոլորովին  
 22 նշնացուց : Ռոսուլֆին առարինութիւ-  
 33 նը՝ մեծարանքի եւ խղճի խայթոցի տակ  
 44 զիս ճրգմեց : Սէրջապէս աչքս բա-  
 55 րեկամիս մօզը դարձուցի . աչքերը մայր  
 66 ցուազինին պէս խաչելութեան պատ-

կերին վրայ տնկած էր. և ցաւապին  
մօրը աղէկաուր պատկերը իր վրան  
նկարուած էր: Արողունքները կը շար-  
ժէին. տակաին՝ աղօթք կընէր. թէ-  
պէտ հօգէվարութեան նախընթացնը-  
շանները ձակատին վրայ տեսայ: Աւեր-  
ջը աչքերը ինծի դարձուց, որ նայ-  
ուածքնին կորսնցուցեր էին. որոնց ա-  
տեն մը առոյգութիւնը և բաղցրու-  
թիւնը տեսէր էի. և մարած ձայնով  
մըւօր հազիւ կը հասկցուէր՝ ըսաւ.  
Կարգացի՛ր: Ինչո՞ւ է. թէպէտ Բա-  
տուած անոր մեծ շնորհք է պարգեւեր.  
բայց դուն՝ Բ. Վերեա, անոր հաստա-  
տութիւն և պաշտպան պիտի ըլլաս  
միշտ: այնպէս չէ՞: Եւ անեղ պիտի  
երթաս, և իմ հրաժարական օղբոյնս  
և օրհնութիւնս տանիս անոր: Բայց,  
որդոյս սիրելի բարեկամը, առաջ դուն  
եկա՛ր օրհնութիւնս ընդունէ: Աւեր-



տակիր մօր մը վերջին օրհնութիւնները  
 քեզի համար են . Մտառած լսէ : Մտառ  
 Ռոստոֆիս ինչ որ ըրիր նէ՛ փոխարէնը  
 Մտառած հատուցանէ քեզի . . . Ընք  
 ո՛չ ողորմութեանը եւ ո՛չ արդարա-  
 թեանը առաջը բան չը մտազուիր . եւ  
 քեզի համար աղօթած ասեմնս Մտա-  
 րած աղօթքս կը լսէ : . . . Եկու՛ր օրհ-  
 նութիւնս ա՛ն . եւ նիրելի որդւոյս ա՛ր :

« Մտառ հաւոր հրամանս որ ըրաւ՝  
 ելայ եւ անկողնոյն առաջը ծուռկի վը-  
 րայ եկայ , մեղապարտ ճակատս ձեռքե-  
 րուս մէջ պահելով : Եւ իւանդը իր աղ-  
 կար ձեռքերը տարածեց . եւ դողդո-  
 ջուն ձայնով մը ըսաւ . կուզեմ քեզ օրհ-  
 նել , քեզ գրկել , եւ քու գիրկդ հագիս  
 աւանդել , որ իմ դաւախս միտքըս կը-  
 բերես :

« Մտառան շատ եղաւ . . . Եւ անկողնայ  
 շարժմանըով մը ետ ետ գացի . օրհ-

նոյ ձեռքերը հրեցի եւ ըսի. զիս մի՛  
օրհներ. ես անէծքի՛ արժանի եմ.  
Հարը ե՛ս մեռցուցի. Ռօսօլֆը ե՛ս  
Թին խրկեցի:

1) Բսածս հասկըցա՞ւ. Եսնպէս կը  
կարծեմ. վասն զի վերջին նայուածքը  
սասկում կը ցուցընէր. ձեռքերը ան-  
կողնին վրայ ինկան. Խօսիլ ուզեց.  
բան չկրցաւ ըսել. . . Եսկէց աւելի  
բան չտեսայ. ըսածէս ես վախցայ,  
անխորշելի անէծքին իմ վրաս թափե-  
լիքը սասկում բերաւ ինձի. աչքերս  
ու ձակասաւ ձեռքովս գոցելով ծունկի  
վրայ՝ եկայ. 3 մահուան անկողնին քով  
լեզի ու մաք արցունքի հեղեղ մը աչ-  
քէս կը վազեր. Եսանկ ս՞րբան տանն  
անցաւ. շգիտեմ. կալուածին վարձողը  
վրայ եկաւ. եւ անոր, ձայնէն խելքս  
զլուխս եկաւ. որ հըրսէր, արստ՞ս.  
խեղճ, խաթունը մտերէ, քաշածնե-

քէն . ազատեցաւ . բարերարն Մատուած  
արքայութեան արժանացրնէ :

« Այլայ , եւ անկողնին վրայ պառ-  
կած պաղած մարմինն ձեռք տեսայ .  
որուն վրայ վարձուորը մեռելներուն  
լաթը ձգեր գոցեր էր յարգանօք : Այլ  
վերցնելու չհամարձակեցայ , երեսը  
նայելու չհամարձակեցայ , որ իրեն  
հանդիւած եւ քաղցր կեցուածքովն  
ալ ինծի ահարկու էր . մահահոտ տեղէն  
հեռացայ , երբ ամենն ըստ սովորու-  
թեան զիս կը գովէին՝ որ ինծի սոս-  
կում կը բերէր . բարի մարդիկ , որ իմ  
բարերարութեանս եւ դիւրազգացու-  
թեանս վրայ կը զմայլէին : Արած ամէն  
առգնապներուս եւ կսկիծներուս մէջ ա-  
սիկայ գուցէ ամէնէն դժընդակն էր :  
« Այլ սուտ կեանք . ե՞րբ պիտի լըմըն-  
նաս . վա՛ւտ կեանք , պատիժդ ե՞րբ պի-  
տի առնես :

Այս առաւ մատաւ տը Վաննու  
 յին հոգւոյն համար մատուցուած սուրբ  
 պատարագին ներկայ գանուեցայ : Ա-  
 նոր պէս վերսկսանդ հաւատացի լոյ՛մը  
 համար քրիստոնէից պատարագը մա-  
 տուցանել առած ասեննս կը խորհե-  
 որ անոր հոգւոյն հանելի ըլլամ եւ  
 յիշատակը՝ պատու եմ . եւ ինձի անանկ  
 կուգար որ այս հաշտութեան պատա-  
 րագը սրտիս կեկիծը այս կեանքէս  
 հանգերձեալ կեանքը տանելով վճարք  
 մը ընդունած կը բերե ինձի : Աստ-  
 տայ ինեքէ՛ի վեր այս առաջին անգա-  
 մըս եր որ աղօթք ըսի . իմ զզը ման  
 աղաղակներս առ Աստուած վերցուցի՛  
 որ աղայութեանս Աստուածն էր . եւ  
 մայրս անոր համար լաներ կը խօսէր ին-  
 ձի : Պատարագէն . ետքը . եկեղեցւոյ  
 մէջ մինակ ծուխի վրայ՝ առ Աստուած  
 կը խօսէի . հոբիս անոր առաջը տարա-

Ծերէի. յանցանքս, ցաւերս, ամէն բան  
 անոր ըսի. խոստովանեցայ : Այս եւ  
 զորութիւն եւ արիութիւն եւ ինչ որ  
 շունէի նէ խնդրեցի : Այս առաջին ան-  
 գամն է որ զիս թեթեւցած իմացայ-  
 այնպէս եկաւ ինձի որ գթած ականջը  
 աղօթքներս լսեց. եւ գթած ձեռքը  
 ինձի երկնցուց : Այն տարիէն ետքը  
 այս առաջին անգամ յոյն մը ունենա-  
 լու համարձակեցայ . ըայց ի՞նչ բանի .  
 չեմ գիտեր : Անշուշտ թողութիւն եւ  
 խաղաղութիւն պիտի ըլլար. վասն զի  
 այս ատենս հոգւոյ խաղաղութիւնը  
 մարդկային կենաց ձիրքերուն ամէնէն  
 փառաւորը սեպած պիտի ըլլայի : Ըայց  
 ըրած շարութեանս փոխարէն վճարք  
 մը ընելով միայն կրօնայի այդ խաղա-  
 ղութիւնը վաստակիլ : Ինչ որ այն առ-  
 աւուան գիտաւորութիւնս գիտացկուն ըլ-  
 լար՝ անոր ալ ուժ կունենայի կարծեմ :

« Ռոստոֆ Լստուած կայ ըլլալը իր  
անմեղութեամբը գտաւ . ես իմ սրբութիւ  
կեկեծներուն մէջ գտայ, « առա-  
քինի մարդուն սրտին մէջ չգիտեմ ո՞ր  
Լստուածը, բայց անշուշտ Լստուած  
մը կը բնակի, » ըսաւ Հին Հեղինակ մը :  
Ի՞նչ սիրտ, որ փորձութեան մէջ է եւ  
մարդկային ընկերութեան մերժուած,  
որ կը տանջուի, եւ ինձի կը ներէ :  
Իողճիս անդադար ներգործութիւնը ին-  
ձի ճանչցուց որ խիստ դատաւոր Լստ-  
ուած մը կայ . որուն աչքը գիշերուան  
մութին ալ՝ մեղապարտ խղճի խաւա-  
րային անդունդներուն մէջ ալ կը տեսնէ :  
Մոյն ձայնը որ մայրասպան Ղերոնին  
կը խօսէր . բնութեան եւ առանձնու-  
թեան ահարկու լեզուն որ յանցաոր-  
ւներուն ահանջը անդադար կը գոռայ,  
այն անուն չունեցող վախերը որ սուր  
ճանկիպէս մարդուն սիրտը կը բըզբը-

անն, այս ամէն նշանները եւ սոսկում-  
ները վրէժխնդիր, եւ քուցե ոչորմած  
Մատուածոյ պատգամաորներն են, որ  
յախտեան չլպատեւըս համար ժա-  
մանակով կսպանայ: . . . (Յախտեա՞ն:  
Մտր ալ գոյութիւնը՝ մեանելէն վախ-  
նալս սովոնցուց ինձի:

„ Ս՝ ահա քուն մըն է . . . չըլլայ  
որ արթըննալ մը ըլլայ . բայց մեղա-  
ւորի մը համար ի՞նչ արթըննալ: Մտ-  
ուած ու ինքը իրարու յանդիման. եւ  
տանջանքին յախտենականութիւնը ոչ-  
քին տուա՞լ:

„ Հաւատացողները կը յուսան ալ,  
անոնց համար Մտուած ներող եւ ո-  
չորմած է: Քրիստոսի հետ խաչ ել-  
լող եւ անոր բերնէն թողութեան վըս-  
տահութիւնը անող աւազակին պատ-  
մութիւնը աւետարանին մէջ գտայ, եւ  
սիրտս փշնկելով կարգացի. „ այսօր

„ ընդ իս իցես 'ի գրականն „ ըսաւ . . .  
Գառապարտութեան վճիռը ընդուե-  
ցաւ . մեզքը քակուեցաւ . խղճին ար-  
հաւիրքը յախտեան ջրուեցաւ . . . Ա-  
բանեղի՛ մեղաւոր . բայց այն ալ իր եղ-  
բայրները մեռցո՛ւց . . . Հոգ չէ՛ . կու-  
ղեմ սա խաղաղցընող ու ներող կրօն-  
քին վարժուիլ . աղօթք ընել կու-  
ղեմ : . .

„ Ա՛մէն օր կաղօթեմ . ըսել է որ՝  
Աստուծոյ կաղաղակեմ թէ ողորմելի՛  
եմ . ողորմէ՛ ինձի : Ազդարտա Տա-  
ւաթի վրայ միտքս լուսաւորող գիրքեր  
կը կարդամ եւ խորունկը կը թափան-  
ցեմ . եւ ո՛րքան առաջ երթամ , ո՛րքան  
զեպ 'ի անոր բարձր սկզբունքներն ել-  
լեմ , այնքան կը համոզուիմ որ Աստ-  
ուածային է . եւ կապելոյ եւ արձակե-  
լոյ իշխանութիւնը որ եկեղեցին ու-  
նի , միայն Աստուծակէ արուած է անոր :



Կերեն՝ Մատուցոյ անուամբը խօսելով  
ինձի թողութիւն առ կրօնացի մարդ  
մը կայ աշխարհքս . կրօնամ փրկու-  
թեան եւ շնորհաց խօսք լսել . կրօնամ  
անանկ դատաստանի մը առաջ ծունկի  
վրայ դալ ուր յանցաւորը ինք զենքը  
կամբաստանէ . եւ Մատուցոյ հետ  
հաշտուած ելլել անկեց : Ա՛նկ պայ-  
ման մը խոստովանիլը (չէ՞ մի որ այս  
թողութեանս համար կը պահանջուի :  
Եւ այց Մատուցոյ հետ հաշտուիլս ի-  
մանումնէ՛ առաջին անմեղութիւնս ձեռք  
ձգած , եւ փնջեւ սյն առենը ինձի  
անծանօթ դորութիւն մը վատակած չե՛մ  
մի ըլլար հատուցում ընելու եւ ներա-  
դութիւն կրելու :

Եւ շեմ կրօնար այս ճշմարտու-  
թիւնը չձանչնալ , որ այսքան առեւ  
աչքէս պահուած էր : Մատուած , ո-  
րուն գոյութիւնը մէկն ալ չկրօնար

արանալ երբ ինք զինքը քննէ, ա-  
բարչութեան սկիզբէն արարածներուն  
հետ ուխտ ու դաշինք դրաւ. իր Մտ-  
տածային օրէնքը անոնց սրտին մէջ  
տպաւորեց, որ են արարչին երկրպա-  
գել. աղէկութիւն ընել. գէշութենէ  
փախչել. եւ թէ որ անանկ բան մը  
գործած է նէ՛ հատուցում ընել: Ատ-  
քը երբ մտացկոտ մարդոց մտքէն ել-  
լելու վճայ էր, քարէ տախտակներու  
վճայ գրեց: Աննա լերանը վճայ, եւ  
ընտրեալ ժողովրդին աւանդեց: Ար-  
կու հազար տարի ետքը փրկիչը ե-  
կաւ նորոգելու եւ կատարելագործելու.  
օրէնքը չուծեց՝ այլ կատարելութեան  
բերաւ, եւ իր բոլոր արիւնը մարդոց  
ընծայելով ազամորդիներուն գէմ տըր-  
ուած ընդհանուր վճիռը ընջեց, եւ  
այս փրկարար արեանը մէջ հողինին  
լուարու զինաց տուաւ հաւատա-

ցողներուն : Բնաւ մեղք մը չկընար  
ըլլալ որ այս արիւնը չլուայ եւ չքնջէ :  
եւ ասոր սրբազան աւանդապահը եկե-  
ղեցին է . որ աշխարհի ստեղծուելում  
առաջին օրերէն սահմանուած - եւ  
Պէտական քահանայութիւնով շարու-  
նակուած , եւնոյն խկ Էջիս ուսէ Բը-  
րիստոսէ : վիմի վրայ հաստատուած է :  
Եւս է հիսակուան : հաւատքս : Երդ՝  
մէկը մեղք իյնայ նէ Ետուած ի՞նչ  
կուզէ . եկեղեցին ի՞նչ կը խընդրէ .  
մարդկային ազգի ընդհանուր աւան-  
դութիւնը ի՞նչ կը պահանջէ . խոս-  
տովանիլ . ըրածը պատմել : . . . . .  
Սեր նախածնողներուն շարաշար ան-  
հնազանդութենէն ետքը ասիկայ ուզեց  
Ետուած անոնցմէ . եւ մեղաց խոնարհ  
խոստովանութեանը : վրայ փրկչին  
խոստմունքը տրուեցաւ : Վայէն խոս-  
տովանիլ չուզեց . անէծք առաւ : . . . . . եւ

աշխարհքի վրայ բարբարական եղանակով,  
 Քահանայապետը տասն եւ երկու շե-  
 դերուն անունովը : ժողովուրդին օրի-  
 նազանցութիւնները կը խոստովանէր :  
 եւ խոստովանելէն եւ զոհ մատուցա-  
 նելէն ետքը մաքրուած կը մանէր սըր-  
 բութիւն սրբութեանցը : . . . Աւելի  
 յայտնի, միանգամայն եւ աւելի խո-  
 բունկ է աւետարանական օրէնքը, որ  
 ամեն մարդու կը պատուիրէ իր ըօած-  
 յանցանքը ուրիշ մէկի մը խոստովա-  
 նիլ, այն ալ անբռնաբարելի դաղտ-  
 նութեան կապով կապուած : . . . Մար-  
 դոյս Կէշութեանը սահմանուած Աստ-  
 ոածային դեղը ասիկայ է . թշուառ  
 մեղաւորներուն ունեցած վերջին յոյսը  
 այս է : “ Մի սպանաներ . . . մի  
 սուտ վկայեր ” կըսէ հին օրէնքը .  
 բայց այս մարդկային սրտին խորունկը  
 քանդակուած սրբազան բարոյականը



# ԳԼՈՒԽ Է:

## Գուշ

Երբիկանը մտա էր: Ահեղեցիին Վեկ  
դաս կողմի պահարանը քահանայն քանի  
մի կին կը խոստովանցընէր, որ ցե-  
րեկուան աշխատութիւննին լըմընցընե-  
լէն ետքը միւս օրուան տունին պատ-  
քաստութիւն կը տեսնէին: Ահեղեցին  
մտութիւնը միայն պահարանը կանթեղ  
մը վառած կար, որ կօթիկ ձեռով  
շինուած խոստովանարանը, եւ վաղ-  
ուան տունին համար ձերմակեղէնով  
զարդարուած սեղանը, եւ խորանին ճա-  
կատը կը լուսաւորէր, որ տեղ երկու

աւազակներու մէջ խաչեալ Յիսուսի մէջ  
սպասկերը կար: Արջին շունչը հա-  
սած փրկչին գեմքին վրայ լուսոյ շա-  
ւաւիղ մը իջած էր, որ անձառ հե-  
ղութիւնը աչքիս առաջը կը բերէր:  
Աւազակներուն մէկը հոգի տալու ցա-  
ւերուն մէջ կը շարշարուէր. մէկալը իր  
Աստուածային խաչակիցին կողմը յու-  
սալից երեսը դարձուցեր կրնայէր իր  
ցաւերուն մէջ. եւ փրկչին մահկանացու  
կենաց վերջին գործն եզոզ թողու-  
թեան տեսարանը ազէկ նկարագրեր էր  
սպասկերհանին վրձինը: Աշկեղեցւոյ մէջ՝  
խոստովանաբանը կեցող ապաշխարող-  
ներուն մեղմածայն մրմունջէն զատ ձայն  
չէր լսուէր. շիունկերու հոտ մը ծաւա-  
լեր կը բուրէր օդոյն մէջ. ամէն բան  
հանդարտ եւ խաղաղ եւ սպաքեշտ ահա  
նածութեամբ լի էր: Անդանի վան-  
դակապտարին առաջը մարդ մը ծունկի

վրայ եկած էր. ձեռքերը իրարու կը-  
 ցած եւ գլուխը վրան կըթընցուցած  
 խել մը ասնն աղօթք ընելէն ետքը  
 զերմեռանդ պաղատանքով մը աչքերը  
 դեպ'ի Վրխատոս դարձուց : Ինքեւ  
 շըշընջին մը լսուեցաւ խոստովանարա-  
 նին կողմը . ամենէն վերջը խոստովանող  
 կինը ելեր եւ կամաց կամաց կերթար  
 կոր : Ալֆրէա Սերվէ հաստատուն ո-  
 րոշմամբ ելաւ, խոստովանարանին տ-  
 ուաջը դնաց . . .

Խոստովանանքը երկան քշեց . . .  
 բայց եկեղեցին մարդ չկար : Մար-  
 դու ականջ չկար որ ինք զինքը ամբաս-  
 տանող ՝ մեղաւորին ձայնը, եւ անոր  
 ընկճած ու խոնարհած հոգին Աստու-  
 ծոյ անուամբը վերականգնող Աս-  
 տուծոյ պաշտօնէին մխիթարիչ խօս-  
 քերը լըսէր : Վաղանի խօսակցու-  
 թիւնը վերջապէս լըմընցաւ : Ալֆրէա



գեղնած . եւ ծունկերը գողգողալով ,  
բայց հանդարտ , ելաւ առջեւն . դա-  
նայ սրբատունին վանդակապատին ա-  
ռաջը . ծունկի վրայ եկաւ . եւ աչքե-  
րէն օրհնեալ արտասուք մը սուրբ սե-  
ղանը թքօղեց : Հոգւոց Աստուածա-  
յին ասեանը անոր համար վճիռ տու-  
եր էր . զղջացեալ եւ հնազանդ ծուն-  
կի վրայ եկած էր , եւ մխիթարուած ե-  
լաւ :

Ընայ խոստովանութեանը եւ զղջ-  
մանը մէկ բան մը կը պակսէր . քա-  
ւութիւնը : Ալֆրէտ՝ իր ասկէց ետքի  
վիճակին օրոշումը տուող մարդուն  
բերնէն ելած պատուերը մտիկ ըրաւ :  
Առաջ իր բարեկամին առաջը խոնար-  
հելու , եւ ետքը մարդկային արդարու-  
թեան սխալ գործելը իմացընելու դի-  
տուորութեամբ Ղուլոն դնայ . եւ ճա-  
նապարհորդութիւնը հանդարտութեամբ

բժաւ : Ա ճարք ընելու յուսով խնայած  
զուարճութեանն առաջը՝ իր ասկէց առաջ  
վախու սպառնառ եղած ամէն բան առ-  
ջեւէն աներևոյթ, եղած էր. խղճմը-  
տանքը թեթեւցեր եւ իրեն անծանօթ  
ուրախութիւն մը բերեր էր. գիտես  
թէ վրայէն ծանր բեռ մը վերցած էր  
եւ մինչեւ այն ասեւնը զինքը վշտա-  
ցընող վերքը գոցուած էր : Անքզինք  
մտայեք՝ միայն Արատօլֆը կը մըտմը-  
տար. Արատօլֆ սլիախ աղատուէր. սլի-  
ախ արդարանար. եւ ասկաւին երիտա-  
տարդ ըլլալով նոր կեանքի մը սկսե-  
լու ժամանակ ունէր. հասարակաց ա-  
ռաջը իր վարկումը ու պատիւը կորսըն-  
ցունելը՝ որ ասկէց առաջ իր աչքին  
առջեւը խրատելիակ մը եղած էր. հի-  
մայ զինքը այնքան շէր վախցընէր. գի-  
տէր որ անիրաւութեամբ վաստակ-  
ուած պատիւ մը մարդուն հոգիին ս'ըբան

Ճանր բեռ է. եւ անպաշխարաց<sup>մ</sup> բրիտանեաց մը ըլլալով գիտէր թէ մարդս իր անձինը վրայ ի՞նչ արդարութեան գործ ընելու պարտական է. ուստի կը ընելու պատիժը միտքն ալ շէր գար. միայն չարչարուելէքը եւ ըրած գէշութեանը փոխարէն ընելու հասուցումը եւ սուսա աշխարհէս մեկնելը մտածելով որուն անպատմելի ցաւերուն համը առած էր, սիրտը ուրախութեամբ կը լեցուէր.

Դուլոն հասնելուն պէս շիտակ թին դատապարտուածներուն տեղը դընաց. եւ սվ ըլլալը իմացընելով հըրաման ուղեց պատժաւոր Ռոսուլֆին հետ մէկ մը, առանձին տեսնուելու. Խօսարանը առին զինքը, եւ չպատմուելու անձկութիւնով մը հան սպասեց. ամէն անգամ որ շունչ մը կը լսէր՝ կը կարծէր թէ Ռոսուլֆը կու-

դայ . եւ վախցած միանգամայն եւ փա-  
փաքած որոշիչ ժամանակն որ մօտե-  
ցաւ՝ սիրող անանկ տաղնապններով կը  
չարչարուէր , որ միայն ասիկայ կօզակը  
բոլոր կենացը մեղքը քանելու :

Արահին մէջ ծանր քաշողն մը ոտ-  
քի ձայն եկաւ երկար ասեն սպասելէն  
ետքը : Ալֆրէտ ելաւ , կը դողար . մա-  
նրո ամպերու պէս բան մը աչքերուն  
առաջը կը թըռչըտէր . բայց ասանկ  
ժամանակէ մը անբաժանելի եղած վա-  
խուն հետ բարեկամութենէն եւ խըղճ-  
մըտանքէն պատճառած ուրախութեան  
աշխոյժ մը խառնուած էր սրտին մէջ :

Իուրը բացուեցաւ . տարիքին շա-  
տութիւնովը կուզը դուրս ինկած . ծեր  
քահանայ մը կամաց կամաց ներս մտաւ .  
աչքերը տկարացած՝ հոն եկող երիտա-  
սարգը կը բընտուեր , որ զարմանքով  
անոր կը նայէր :

— Քաւ. պա՛րան . կարծեմ պատ-  
ժաւոր Սոսորթ տը Լաննուան կու-  
ղես :

— Այո՛ Տէ՛ր :

— Ես բանտին քահանայն եմ .  
եւ որովհետեւ այն խեղճ երիտասար-  
դին վրայ հոգ ունենալ կերեւիս , ցա-  
ւով սրտի քեզի կիմացընեմ . երեք օր  
է որ մեռաւ :

— Մեռա՞ւ . . ե՛տքը ե՛տքը մե-  
ռաւ հա՞ . . ըսելով արամութեամբ մը  
աթոռին վրայ ինկաւ :

— Այո՛ , պարո՛ն . մեռաւ . եւ քե-  
զի՛ որ անխկայ սիրել կերեւիս , միտ-  
թարութիւն մը կը լլայ գիտնալը որ ար-  
դարոց մահուամբ մեռաւ . եւ անոր յա-  
ւիտենակիւնն փրկութեանը վրայ քաղց-  
րիկ յոյս կրնանք ունենալ : Բարի՛ է  
Աստուած . մեծամեծ շնորհքներ կը-  
նէ . եւ աշխարհքէս մերժուած մարդիկ

շատ անգամ անոր առաջը փառասոր-  
 ուած կը դանուին: Այս պատանին թին  
 եկած տաննէն 'ի վեր աղէկ վարձու-  
 քի եւ Աստուծոյ կամաց համաձայնե-  
 լու օրինակ մը եղած եր. բարեծնունդ  
 եւ աղէկ կրթութիւն առած կերեւեր.  
 եւ աղայութեան տաննէն իր քրիստո-  
 նեայ մօրմէն առած վարժութիւններու  
 վը բըշիկ բըշիկ քրիստոնէական հա-  
 ւատքը իր զօրաւոր ազդեցութիւնը բա-  
 նեցուց ասոր վայ: Առբը մը եղաւ  
 պարոն: Ղատաղարութեանը պատ-  
 ճառ եղող յանցանքին վայ ամենեւին  
 չէր խստեր. բայց ապաշխարողի մը  
 պէս պատիժը կը կրէր, իր յանցանքը  
 ի նչ որ էր նէ՝ քրիստոնէական ճշգ-  
 նութեան դասն ջրովը լուարու փա-  
 փաք ունէր: Այս թշուառութեան  
 տեղերը անանկ օրինակներ տալէն ետ-  
 քը, որ վանական ճգնաւորներուն ալ

նախանձելի կըրնար ըլլալ, իր եղ-  
բայրսիրութեանը զոհ գնաց: Այսին զի  
փուռ տանգէ բրնուած ընկերներուն  
գարման տանելով անոնց հիանգու-  
գենէն պըլըշկեցաւ: Հոգի տալու վը-  
րայ մեր ամենուս բարի օրինակ եղաւ.  
Ի՞նչ հեղութիւն. ի՞նչ Աստուծոյ կա-  
մայքը զինքը համաձայնեցընել. սուրբ  
խորհուրդներու ի՞նչ փափաք. ի՞նչ  
պէս ինքը զինքը երկնաւոր հօրը յանձ-  
նել. ո՛րքան մշտնջենաւոր աղօթք:  
Այո՛ պարոն. անիկայ գարմանող մա-  
րապետները, եւ ես ալ որ հոգեւո-  
րապէս անոր կօչնէի, ամէն ալ անի-  
կայ մեզի բարեխօս բրնելու յօժա-  
րութիւն մը ունէինք: Մեռնելէն ա-  
ռաջ՝ խելքը գլուխը լըման եղած ա-  
տենը զիւ մը դրեց ինծի տուաւ. որ  
այսօր պիտի խրկէի. . . պարոն Ալֆ-  
րէա Սերվէին ուղղուած է. եւ ինձի

ըսին պարն, որ քու անունդ ալ այս է :

— Ա՛յո՛ Տէր, ե՛ս եմ այն :

— Քահանայն գրասպանակէն կընքուած նամակ մը հանեց եւ Ալֆրէտին տուաւ. Ալֆրէտ՝ ձեռքը գողգողաւ լով առաւ. կայնեցաւ, եւ քահանայն անգադար Ռոսուլֆին վրայ խօսելով անոր առաջն ինկաւ. վախճանելոյն տարինութիւնները եւ մահը վրան մեծ ազդեցութիւն ըրած էին :

Պատժաւորը իր բարեկամին այսպէս գրած էր :

„ Կը մեռնիմ կոր Ալֆրէտ. խեղճ մօրս քովը կերթամ. եւ յաւիտեան մխիթարչին Աստուծոյ հետ պիտի միանամ, որ այս բանտիս մէջ ինձի այցելութիւն ըրաւ : Այնքան [անգամ քու ձեռքդ օրհմող ձեռքը զերեզ-



մանին մէջ պիտի ստոխի. բայց քեզ սիրող հոգին անմահ կենօք պիտի. ապրի : Վհու վրաց պիտի հսկէ. քեզի համար պիտի աղօթէ : Օչխ մըտիկ ըօէ. դատապարտութեանս պատճառ եղող եղևոնադործութենէն անպարտ կը մեանիմ կոր, գիտես. դատաւորներուս կը ներեմ. հաւանականութեան կերպարանքներու վրայ կը դատեն անոնք : . . . Բայց գուցէ ուրիշ մը իմ ներելուս պէտք ունի. անոր ալ կատարելապէս կը ներեմ :

„ Իբարու հետ մեծցանք Մ. Մ. Ֆրէտ . օրորոցէդ 'ի վեր քեզ կը ճանչնամ, շարժմունքդ, նայուածքդ, ձայնդ, կը հասկընամ. եւ զիս պաշտպանելու համար խօսած ատենդ ցաւդ ու խիղճդ քեզ մատնեցին անոնց՝ որոնցմէ բան մը չէիր կրնար պահել : Եւ եկ զիպուած մը՝ որ յիշելը աւելորդ է, կաս-

կածս ճշմարտի փոխեց . . . Ս' կկ բա-  
սով մը քուկին բանդ կը լումըննար .  
բայց այն բառը բերնէս ե'ս չէի կըր-  
նար հանել . լուցի . քեզ մեղքացայ եւ  
ներեցի . եւ հիմայ որ' ինչպէս կը յու-  
սամ, Աստուծոյ ողորմութիւնովը եւ  
քաշած խիստ ապաշխարութիւնովս  
մեղքերէս մարբուած եմ, քեզի կը կին  
զբուցելը ախորժելի' է ինձի, իմ ար-  
դայութեանս սիրելի' բարեկամը, թէ  
քեզի կը ներեմ եւ քեզ կը սիրեմ: Իմ  
բարեկամութեանս կտակը հոս ընդունէ :  
Իմ բռնած խորհրդապահութիւնս հի-  
մայ եւ ալ քեզի կը պատուիրեմ. ցա-  
ւալի գաղտնիքը չեմ ուզեր որ մէկու  
մը բանաս. մի' կարծեր որ ասով իմ  
յիշատակս կը պատուես եւ նախատին-  
քըն ու անպատուութիւնը վրայէս կը  
վերցընես : Աչ մարդոց, եւ ո'չ ալ ա-  
նոնց, հաւանութեանը կարօտութիւն

չունիմ ասկէց ետքը. խաղաղութեամբ  
 Մատուծոյ գիրին եմ: Դուն որ ա-  
 կաին աշխարհքի վրայ ես, բարի  
 համբաւդ իբրեւ ապաշխարանք քաշէ՛.  
 աղէկ վարկումդ բարեբարութիւն ը-  
 նելու գործած է՛. եւ թէ որ մինչեւ հի-  
 մայ Մատուծոյ ձայնը սրտիդ լսելի ե-  
 դած չէ՛ նէ՛ աղաչէ՛ որ քեզի նայի եւ  
 քեզ իրենց կանչէ: . . Մ, Ս, Լ եւ այլ ձամ-  
 բով երթալնուս ետքը, գուն պատուոյ  
 եւ ես անարգութեան, ձամբուն ծայրը  
 երկուքս իրար պիտի գտնեմք. ասկէց  
 աւելի ի՞նչ պէտք է: Ա՛ երջին հրամա-  
 նըս մտքէդ մի՛ հաներ. խորհրդապահ  
 եղի՛ր. եւ մի՛ կարծէր որ վերջինց կամ-  
 քիս: շնագանդելով իմ յիշատակս պա-  
 տուած կըլլաս: Ա՛յլ չլեր. վերջին մը-  
 տած ութիւնս քու վրայ է: . .

Ռոտովֆ

Ափրէա քանի որ ընթերցմունքը առաջ կը տանէր՝ երեսին գոյնը կը նետէր. ծունկերը իրար կը զարնէին. սրբախն յուզմունքը շատ էր. եւ այս վերջինս իր ուժէն վեր էր: Աչքերը քահանային դարձընելով ըսաւ մարած ձայնով մը. հո՛ս է. այս տե՛ղս է որ ես ալ պիտի մեռնիմ: Ո՛վ Աստուած իմ, Լողորմէ՛ ինձի: Այս ըսաւ, ու մարեցաւ ինկաւ հաշտութեան պաշտօնէին սաքերուն առաջք. քահանայն ձեռքերը վրան տարածեց եւ արձակում տուաւ. Ափրէա Սերվէ՛ աշխարհքիս կեանքը լըմընցուցեր էր:

Եւ այսչէս երեք երիտասարդ, երեք բարեկամ. քիչ մը առաջ երջանիկ եւ շքեղ, առոյգ, եւ աղէկ ապագայի յուսով լի՛, գարշելի կիրքի մը զոհ եղան՝ յոր հիմայ շատ ընտանեաց մէջ սուգ եւ արամութիւն կը սերմանէ. բայց

Եստուծոյ անբաւ գթութիւնովք՝ որ  
չարեն բարի հանել գիտէ, Եւրլը  
Տարս զինքը մնացընողին ներելով մե-  
ռաւ. Որտալք ար Լ աննուա բարեկա-  
մութեան նահատակ եղաւ. եւ Եւքրէտ  
Սերվէ զղջումով մեռաւ.

Մ Ե Ր Թ Ն

Յ Ե Ն Կ

Երև

ԳԼ. Ե: Երեք բարեկամներ.	5
„ . Բ: Կախ . . . . .	11
„ . Գ: Գառաւտամեական	
Տարցիորձ . . . . .	20
„ . Դ: Գառաղական արեան	37
„ . Ե: Եւֆրէա Սերլէ . .	50
„ . Զ: Օրագիր անարակ .	61
„ . Է: Գուշոն . . . . .	112

## Ա Ձ Դ

Այս 'Քրիստոնէական' որ Ազգային Կրօնական Ժողովոյն Համաժողովեամբ մեր արդէն երկրորդական վարժարանաց Համար պատրաստած միջակ Քրիստոնէական վարդապետութենէն Համառօտուած է, թաւական կը պարունակէ իր մէջը նորուս Համբաւաց ամենահարկաւոր ուսանելիքները, որով նախակը բթական վարժարանի տը դայք ալ կը բնան իրենց պէտքին շափ տեղեկութիւն ստանալ Քրիստոնէական կրօնքին վրայօք, և անոր հակառակ մղորութիւններէն պահպանուիլ շնորհօքն Աստուծոյ :

[ՅԵՆԿ

Երև

ԳԼ. Ե:	Երեք բարեկամներ.	5
„ . Ք:	Կռ/ւ . . . . .	11
„ . Գ:	Գատաստանական	
	Հարցվորձ . . . . .	20
„ . Գ:	Գատողական ատեան	37
„ . Ե:	Ելֆրէա Սէրլէ . .	50
„ . Ջ:	Օրագիր տետրակ .	61
„ . Է:	Գուշոն . . . . .	112





